


Ի. ՍՏԱԼԻՆ

ԱՌԱՋԻՆ ՀՆԴԱՄՅԱԿԻ
ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ



ՀԱՅԿՈՒՍՏՂՐԱՏ • 1937 • ՅԵՐԵՎԱՆ

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿԻՐՆԵՐԻ, ՄԻՍՅԵՔ



Ի. ՍՏԱԼԻՆ

ՅԿՈՂ-13

Ա

Լրաց.

9(47)26

ՍՏՈՒԳԱՄ Է. 1961 թ.

**ԱՌԱՋԻՆ ՀՆԳԱՄՅԱԿԻ
ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ**

Զեկուցում Համ Կ(բ) ԿԿ-ի յեղ ԿՎՀ-ի միացյալ պլենումում
1933 թ. հունվարի 7-ին



A $\frac{\pi}{6818}$

И. СТАЛИН
ИТОГИ ПЕРВОЙ
ПЯТИЛЕТКИ

Армиздат, Ереван, 1937

Ընկերներ: Հնդամյա պլանի հրապարակ դալու ժամանակ մարդիկ հաղիվ թե յենթադրում եյին, վոր հնդամյակը կարող է հսկայական միջազգային նշանակութուն ունենալ: Ընդհակառակը, շատերը կարծում եյին, թե հնդամյակը խորհրդային Միութեան մասնավոր դործն է, մի կարևոր և լուրջ դործ, բայց այնուամենայնիվ խորհրդային Միութեան մասնավոր, ազգային դործը:

Սակայն պատմութունը ցույց տվեց, վոր հնդամյակի միջազգային նշանակութունն անչափելի յե: Պատմութունը ցույց տվեց, վոր հնդամյակը վո՛չ թե խորհրդային Միութեան մասնավոր դործն է, այլ ամբողջ միջազգային պրոլետարիատի դործը:

Հնդամյա պլանի հրապարակ դալուց դեռ շատ առաջ, այն ժամանակաշրջանում, յերբ մենք վերջացնում եյինք կռիվն ինտերվենտների դեմ և անցնում եյինք տնտեսական շինարարութեան ուղիների վրա,—դեռ այն ժամանակաշրջանում Լենինն ասում եր, վոր մեր տնտեսական շինարարութունը միջազգային խորը նշանակութուն ունի, վոր խորհրդային իշխանութեան յուրաքանչյուր առաջընթաց քայլը տնտեսական շինարարութեան ուղիով խոր արձագանգ է դնում կապիտալիստական յերկիրների ամենարագմադան խառնելու և մարդկանց յերկու բանակի յե բաժանում—պրոլետարական հեղափոխութեան կողմնակիցների բանակ և նրա հակառակորդների բանակ:

Լենինն այն ժամանակ ասում եր.

«Այժմ մենք միջազգային հեղափոխութեան վրա մեր դիտավոր ներդրածութունն անդամ ենք մեր տնտեսական քաղաքականութեամբ: Ռուսաստանի խորհրդային հանրապետութեանն են նայում ամենքը, աշխարհի բոլոր յերկիրները բոլոր աշխատավորները, առանց վորեւէ բացառութեան և ա-

ունց փոքեւ չափադանցության: Մենք հասել ենք սրան...
Կռիւլն այս ասպարեղն ե փոխադրված համաշխարհային մաս-
շտարով: Յեթե մենք այս խնդիրը լուծենք—այն ժամանակ
մենք միջադպրային մասշտաբով հաստատապես ու վերջնակա-
նորեն հաղթանակ չահած կլինենք: Այս պատճառով՝ տնտե-
սական շինարարության հարցերը միանգամայն բացառիկ
նշանակութիւն են ստանում մեզ համար: Այս ճակատում
մենք պետք ե հաղթութիւն տանենք դանդաղ, աստիճանա-
կան, —արագ չի կարելի, —բայց անշեղ վերելքով ու առաջ-
խաղացութեամբ» (տե՛ս հ. XXVI, էջ 410—411):

Այս ասվել ե այն ժամանակաշրջանում, յերբ մենք ավար-
տում եյինք պատերազմն ինտերվենտների դեմ, յերբ կապիտալիզ-
մի դեմ մղվող ռազմական կռիւց մենք անցնում եյինք պայքարի՝
տնտեսական ճակատում, անցնում եյինք տնտեսական շինարա-
րության ժամանակաշրջանին:

Այն ժամանակվանից չատ տարիներ են անցել, ե խորհրդա-
շին իշխանության յուրաքանչյուր քայլը տնտեսական շինարարու-
թյան բնագաւառում, յուրաքանչյուր տարին, յուրաքանչյուր
յեռամսյակը փայլուն կերպով հաստատում եյին բնկ. Լենինի
այս խոսքերի ճշտութիւնը:

Սակայն Լենինի խոսքերի ճշտության ամենափայլուն հաս-
տատումը տվեց մեր շինարարության հնգամյա պլանը, այդ պլա-
նի ծաղումը, նրա զարգացումը, նրա իրագործումը: Իսկապես,
թվում ե, թե մեր յերկրի տնտեսական շինարարության ուղիով
արված վոչ մի քայլն այնպիսի արձագանդ չի դտել Յեւրոպայի,
Ամերիկայի, Ասիայի կապիտալիստական յերկիրների ամենաբազ-
մազան խափերում, ինչպես հնգամյա պլանի, նրա զարգացման,
նրա իրականացման հարցը:

Առաջին պահին հնգամյա պլանը ծաղրի հանդիպեց բուր-
ժուալիայի ու նրա մամուլի կողմից: «Պանտաղիա», «դառան-
ցանք», «ուռտալիա», —այդպես մկրտեցին նրանք այն ժամանակ
մեր հնգամյա պլանը: Հետո, յերբ սկսեց պարզվել, վոր հնգա-
մյա պլանի կենսագործումն իրական արդյունքներ ե տա-
լիս, —նրանք սկսեցին ահազանդ խիել, պնդելով, թե հնգամյա
պլանն ուղադնում ե կապիտալիստական յերկիրների դոյությանը,
թե նրա կենսագործումը կտանի դեպի յեւրոպական շուկաների
լցումն ապրանքներով, դեպի դեմպինգի ուժեղացումն ու դործա-
զրկության խորացումը: Այնուհետե, յերբ խորհրդային իշխա-
նության դեմ ողտագործված այդ արյունն ել սպասված ար-

գլուխները չտվեց, — բացվեց ամեն տեսակ ֆիրմաների, մամուլի որդաններ, զանազան տեսակ ընկերությունների և այլն դանազան ներկայացուցիչների ուղեորությունների սերիան դեպի ԽՍՀՄ՝ այն նպատակով, վոր իրենց սեփական աչքերով մի լավ տեսնեն, թե, իսկապես ասած, ինչ և կատարվում ԽՍՀՄ-ում: Յես չեմ խոսում այստեղ բանվորական պատվիրակությունների մասին, վորոնք հնդամյա պլանի հրապարակ դալու սկզբից իսկ իրենց հիացմունքն եյին արտահայտում խորհրդային իշխանության ձեռնարկումների ու հաջողությունների վերաբերյալ և իրենց պատրաստակամությունն եյին ցուցաբերում՝ աջակցելու ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգին:

Հենց այդ ժամանակվանից ել սկսվեց աշապես կոչված հասարակական կարծիքի, բուրժուական մամուլի, ամեն տեսակ բուրժուական ընկերությունների և այլոց պառակտումը: Վոմանք պնդում եյին, թե հնդամյա պլանը կատարյալ կրախի յե հանդիպել և բոլջեիկները կործանման յեզրին են կանգնած: Մյուսներն, ընդհակառակը, հավատացնում եյին, վոր թեև բոլջեիկները վատ մարդիկ են, բայց և այնպես նրանց հնդամյա պլանից բան և դուրս դալիս, և նրանք, յերեւի, կհասնեն իրենց նպատակին:

Թերևս ավելորդ չի լինի, յեթե յես բերեմ բուրժուական մամուլի զանազան տեսակ որդանների կարծիքները:

Վերցնենք, որինակի համար, ամերիկյան «Նյու-Յորկ Տայմս» լրագիրը: 1932 թվի նոյեմբերի վերջին այդ թերթը դրում և.

«Հնդամյա արդյունաբերական պլանը, վոր իրեն նպատակ և դրել մարտահրավեր ուղղել համամասնության (пропорция) զգացումին ու իր նպատակին և ձգտում «անկախ ծախքերից», ինչպես հաճախ հպարտությամբ պարծենում եր Մոսկվան, իրականության մեջ պլան չի հանդիսանում: Այդ—սպեկուլացիա յե»:

Դուրս և դալիս, վոր հնդամյակը մինչև անգամ պլան չե, այլ շատարկ սպեկուլացիա: Բայց ահա անգլիական բուրժուական «Դեյլի Տեւեդրաֆ» լրագրի կարծիքը, վոր նա տվել և 1932 թվի նոյեմբերի վերջին:

«Յեթե պլանը քննարկենք իբրև փորձաքար «պլանավորվող եկոնոմիկայի» համար, ապա մենք պետք և ասենք, վոր այն լիակատար կրախի յե յենթարկվել»:

«Նյու-Յորկ Տայմսի» կարծիքը 1932 թվի նոյեմբերին.

«Կոլեկտիվացումը խայտառակ կերպով տապալվեց: Նա Թուսասանը սովի յեզրին հասցրեց:

Լեհաստանի բուրժուական «Գաղետա Պոլսկա» լրագրի կարծիքը, վոր նա տվել է 1932 թվի ամառը.

«Դրուժյունը ցույց է տալիս, կարծես թե, վոր խորհուրդներն կառավարությունը դյուղի կոլեկտիվացման իր քաղաքականությամբ փախուղու մեջ է ընկել»:

Անգլիական բուրժուական «Ֆինանշիել Տայմս» լրագրի կարծիքը, վոր նա տվել է 1932 թվի նոյեմբերին.

«Ստալինն ու նրա կուսակցությունն իրենց քաղաքականության հետեանքով կանդնած են հնդամյա պլանի սխտեմի կրախի և այն բոլոր խնդիրների տապալման առաջ, վորոնք այդ պլանով պետք է կենսագործվեյին»:

Իտալական «Պոլիտիկա» ժուռնալի կարծիքը.

«Անհեթեթություն կլինե՞ր կարծել, թե 160 միլիոն մարդուց բաղկացած ժողովրդի չորս տարվա աշխատանքը, տընտեսական ու քաղաքական դերմարդկային լարման չորս տարին այնպիսի մի ուժեղ ռեժիմի կողմից, ինչպիսին բոլշևիկյան ռեժիմն է, վոչինչ չեն ստեղծել: Ընդհակառակը, նրանք չափ քան են ստեղծել: Յեւ այնուամենայնիվ կատաստրոֆն առկա չէ, դա բոլորի համար ակներև փաստ է: Այս բանում համոզվեցին բարեկամներն ու թշնամիները, բոլշևիկներն ու հակաբոլշևիկները, ոպողիցիոներներն աջից ու ձախից»:

Վերջապես, ամերիկյան բուրժուական «Կերրենտ Հիստորի» ժուռնալի կարծիքը.

«Այսպիսով, դործերի ներկա դրության տեսությունը Ռուսաստանում՝ բերում է այն յեղրակացությանը, վոր հնդամյա ծրագիրը տապալվեց թե՛ հայտարարված նպատակների և թե՛ ե՛լ ավելի հիմնավորապես նրա հիմնական սոցիալական սկզբունքների տեսակետից»:

Սրանք են բուրժուական մամուլի մի մասի կարծիքները:

Հազիվ թե արժե քննադատել այս կարծիքների հեղինակներին: Յես կարծում եմ, վոր չարժե: Չարժե, վորովհետև այս «անդաճակատ» մարդիկ պատկանում են միջնադարյան ժամանակաշրջանի հանածոների այն տեսակին, վորոնց համար փաստերը նշանակութուն չունեն և վորոնք, ինչպես ել վոր կենսագործվելու լինի մեզանում հնդամյա պլանը, — միևնույնն է, իրենցն են անդելու:

Անցնենք մամուլի այլ որդանների կարծիքներին, վորոնք դալիս են նույն այդ բուրժուական բանակից:

Ահա Զերանսիայի հայտնի բուրժուական «Թան» լրագրի կարծիքը, վոր նա ալել է 1932 թվի հունվարին.

«ԽՍՀՄ-ն չահեց առաջին տուրը, ինդուստրացման յենթարկվելով առանց ոտաքերկըյա կապիտալի ոգնության»:
Նույն «Թանի» կարծիքը, տրված 1932 թ. ամառը:

«Կոմունիզմը հսկայական տեմպերով ավարտում է վերակառուցումը, այն ժամանակ, յերբ կապիտալիստական հասարակակարգը թույլ է տալիս միմիայն դանդաղ քայլերով շարժվելու... Զերանսիայում, վորտեղ հողային սեփականությունն անսահմանորեն բաժանված է առանձին սեփականատերերի միջև, անհնար է մեքենայացնել դուրստանտեսությունը, իսկ խորհուրդները, ինդուստրացման յենթարկելով դուրստանտեսությունը, կարողացան յուծել պրոքլեմը... Մեզ հետ տեղի ունեցող մրցության մեջ բոլշևիկները հաղթող դուրս յեկան»:

Անդլիական բուրժուական «Ռաունդ Տեյբլ» ժուռնալի կարծիքը.

«Հնդամյա պլանի նվաճումները զարմանալի յերևույթ են ներկայացնում: Խարկովի ու Ստալինգրադի տրակտորագործարանները, ԱՄՆ ավտոմոբիլային գործարանը Մոսկվայում, Ն. — Նովոգորոդի ավտոմոբիլային գործարանը, Դենպրի հիդրոէլեկտրակայանը, Մադնիսոգորսկի ու Կուզնեցկի վիթխարի սողապատածույական գործարանները, մեքենաչինական ու քիմիական գործարանների ամբողջ ցանցն Ուրալում, վորը խորհրդային Ռուսի յե փոխարկվում, — այս բոլոր և մյուս արդյունաբերական նվաճումներն ամբողջ յերկրում՝ վկայում են, վոր ինչպիսի դժվարություններ ել լինեն, խորհրդային արդյունաբերությունն աճում ու ամրանում է, ինչպես մի լավ ջրվող բույս... Հնդամյա պլանն ապագա զարգացման հիմքերը դրեց և չափազանց ուժեղացրեց ԽՍՀՄ-ի հզորությունը»:

Անդլիական բուրժուական «Ֆինանշիել Տայմս» լրագրի կարծիքը.

«Մեքենաչինական արդյունաբերությունն մեկ ձեռք բերված հաջողությունները վոչ մի կասկածի յենթակա չեն: Այդ հաջողությունների դոյաբանումը մամուլի մեջ և ճառերում ամենևին անհիմն չէ: Զպետք է մոռանալ, վոր Ռուսաստանն առաջ արտադրում եր միմիայն ամենապարզ մեքենաներ ու գործիքներ: Ծիշտ է, այժմ ել մեքենա-

ների ու գործիքների ներմուծման բացարձակ թվերն ա-
վելանում են, բայց ներմուծված մեքենաների համամասնա-
կան բաժինը՝ հենց ԽՍՀՄ-ում արտադրված մեքենաների հա-
մեմատությամբ՝ անընդհատ նվազում է: ԽՍՀՄ-ն ներկա-
յումս արտադրում է այն ամբողջ սարքավորումը, վոր ան-
հրաժեշտ է իր մետաղադործական ու ելեկտրական արդյու-
նաբերության համար: Նա կարողացավ ստեղծել իր սեփական
ավտոմոբիլային արդյունաբերությունը: Նա ստեղծեց դոր-
ծիքների ու ինստրումենտների արտադրությունը, վորն ընդ-
գերկում է ամբողջ դամման՝ մեծ ճշգրտություն պահանջող
ամենամանր գործիքներից սկսած մինչև ընդհուպ ամենից
առվելի ծանր մամլիչները: Իսկ ինչ վերաբերում է դյուզա-
տնտեսական մեքենաներին, ապա ԽՍՀՄ-ն այլևս կախում
չունի արտասահմանյան ներմուծումից: Դրա հետ միասին
խորհրդային կառավարությունը միջոցներ է ձեռք առնում,
վորպեսզի ամխի ու յերկաթի արտադրանքի հապաղումը խո-
չընդոտ հանդիսանա հնդամյակը չորս տարում իրականաց-
նելուն: Կասկածի յենթակա չէ, վոր նոր կառուցված միթ-
խարի գործարաններն ապահովում են ծանր արդյունաբերու-
թյան արտադրանքի նշանակալի աճումը»:

Ավտոմոբիլական բուրժուական «Նոյե Ծրայե Պրեսսե» լրագրի
կարծիքը, վոր նա տվել է 1932 թվի սկզբին.

«Բոլշևիզմը կարելի չէ նզովել, բայց պետք է ճանաչել
այն: Հնգամյակը—այդ մի նոր հսկա յե, վորին անհրաժեշտ
է ուղարկության առնել է, համենայն դեպս, տնտեսական
հաշվարկի մեջ դրել»:

Անդլիական կապիտալիստ Դիբբսոն Զարվիի, «Յունայտեղ
գոմինիոն» բանկի նախագահի, կարծիքը, տրված 1932 թվի հոկ-
տեմբերին.

«Յես ուզում եմ պարզաբանել, վոր յես կոմունիստ չեմ
և բոլշևիկ չեմ, յես վորոշակի կապիտալիստ ու ինդիվիդու-
ալիստ եմ... Ռուսաստանն առաջ է շարժվում այն ժամա-
նակ, յերբ մեր գործարաններից շատ-շատերը չեն բանում և
մեր ժողովրդից մոտ 3 միլիոն հուսահատության մեջ աշխա-
տանք են վորոնում: Հնգամյակը ծաղրում էյին ու նրա տա-
պալումը նախադուշակում: Բայց դուք կարող եք անկասկա-
ծելի համարել, վոր հնգամյա սլանի պայմաններում ավելի
բան է արված, քան ուրվագծվել եր ... Իմ այցելած բոլոր
արդյունաբերական քաղաքներում նոր շրջաններ են առաջ

գալիս, վորոնք կանոնցված են վորոշ պլանով, ծառերով ու պուրակներով դարդարված լայն փողոցներով, ամենից ավելի ժամանակակից տիպի տներով, գալրոցներով, հիվանդանոցներով, բանվորական աղումքներով և անխուսափելի մանկամուկներով ու մանկատներով, վորտեղ հող են տանում աշխատող մայրերի յերեխաների մասին... Մի՛ փորձեք թերազնահատել ողուսական պլանները և սխալ մի՛ դործեք, հուսալով, թե խորհրդային կառավարությունը կարող է տապալել... Այսօրվա Ռուսաստանը հողի ու իրեալ ունեցող մի յերկիր է: Ռուսաստանն ապշեցուցիչ ակտիվության յերկիր է: Յեա հալատում եմ, վոր Ռուսաստանի ձգտումներն առողջ են... Թերևս ամենակարևորն այն է, վոր ամբողջ յերիտասարդությունն ու բանվորները Ռուսաստանում մի բան ունեն, վորը, գծախտաբար, այսօր պակասում է կապիտալիստական յերկիրներում, այն է՝ հույս»:

Մեերիկյան բուրժուական «Նեյչեն» ժուռնալի կարծիքը, տրված 1932 թվի նոյեմբերին.

«Հնգամյա պլանի չորս տարիները հերավի նշանակալից նվաճումներ բերին իրենց հետ: Խորհրդային Միությունը պատերազմական ժամանակի ինտենսիվությամբ եր աշխատում նոր կյանքի հիմքերը կառուցելու ստեղծագործական խնդրի վրա: Յերկրի կերպարանքը փոխվում է բառացիորեն նմանաչեխիության չափ... Այդ ճիշտ է Մոսկվայի վերաբերմամբ՝ նրա հարյուրավոր նոր առփալտած փողոցներով ու պուրակներով, նոր շենքերով, նոր արվարձաններով ու նոր գործարանների շղթայով նրա ծայրամասերում: Այդ ճիշտ է նաև ավելի փոքր քաղաքների վերաբերմամբ: Նոր քաղաքներ են առաջ յեկել տափաստաններում ու անապատներում, վո՛չ թե ինչ-վոր միջանի քաղաքներ, այլ առնվաղն 50 քաղաք, 50-ից մինչև 250 հազար բնակչությամբ: Նրանք բոլորն առաջ են յեկել վերջին չորս տարիներում, նրանցից յուրաքանչյուրը հանդիսանում է մի նոր ձեռնարկության կամ մի շարք ձեռնարկությունների կենտրոնը, ձեռնարկություններ, վորոնք կառուցվել են բնական ռեսուրսները մշակելու համար: Հարյուրավոր նոր չրջանային ելեկտրոկայաններ և Դնեպրոստրոյի նման ամբողջ մի շարք հսկաներ առտիճանաբար կենսագործում են Լենինի այն ֆորմուլան, թե «Մոցիլա-լեզմը խորհրդային իշխանությունն է սլյուս ելեկտրիֆիկացիան»... Խորհրդային Միությունը կազմակերպել է անթիվ-

անհամար այնպիսի առարկաների մասնաշաղկան արտադրութ-
 թյուն, վոր առաջ Ռուսաստանը յերբեք չէր արտադրում,
 այն է՝ տրակտորների, կոմբայնների, բարձրագույն պողպատ-
 ների, սինթետիկ կաուչուկի, գնդառանցքակալների (шарико-
 подшипник), հզոր դիզելներ, 50 հազար կիլովատանոց տուր-
 բինների, հեռախոսային սարքավորման, լեռնարդյունաբե-
 րության համար ելեկտրական մեքենաների արտադրություն-
 նը, սավառակներ, ամպոմոբիլների, հեծանիվների և նոր
 մեքենաների միջանի հարյուր տիպերի արտադրությունը...
 Պատմության մեջ առաջին անգամ Ռուսաստանն արդյունա-
 հանում է ալյումին, մագնեզիտ, ապատիտներ, յոդ, պոտաշ
 և շատ ուրիշ արժեքավոր արդյունքներ: Խորհրդային հար-
 քավայրերի ուղեցույց կետերն այլևս յեկեղեցիների խաչերն
 ու գմբեթները չեն, այլ հացահատիկային ելվառքներն ու
 սիլոսի աշտարակները: Կոլտնտեսությունները կառուցում են
 տներ, դռներ, խոզանոցներ: Ելեկտրականությունը թափան-
 ցում է գյուղը, ռադիոն ու թերթերը նվաճել են այն: Բան-
 վորները սովորում են աշխատել նորագույն մեքենաների վրա:
 Դյուղացի տղաներն այնպիսի դյուղատնտեսական մեքենաներ
 են արտադրում ու սպասարկում նրանց, վորոնք ավելի մեծ
 են ու ավելի բարդ, քան այն, ինչ վոր յերբեք տեսել է Ամե-
 րիկան: Ռուսաստանն սկսում է «մեքենաներով մտածել»:
 Ռուսաստանը փայտի դարից արագորեն անցնում է յերկաթի,
 պողպատի, բետոնի ու շարժիչների դարին»:

Անգլիական «ձախ» ռեֆորմիստական «Փորվարդ» ժուռնալի
 կարծիքը, տրված 1932 թվի տեպտեմբերին.

«Ահլի յե դարնում այն վիթխարի աշխատանքը, վորը
 տեղի յե ունենում ԽՍՀՄ-ում: Նոր գործարաններ, նոր դըպ-
 րոցներ, նոր կինոներ, նոր ակումբներ, նոր վիթխարի տներ՝
 ամենուրեք նոր շենքեր: Նրանցից շատերն արդեն ավարտված
 են, մյուսները դեռ չըջապատված են փայտամածներով:
 Դժվար է անդլիացի ընթերցողին պատմել, թե ինչ է ար-
 ված վերջին յերկու տարում և ինչ է արվում այնուհետև:
 Այդ ամենը պետք է տեսնել՝ հավատարու համար: Մեր սե-
 փական նվաճումները, վոր մենք իրականացրել ենք պատե-
 րազմի ժամանակ, — դատարկ բաներ են միայն այն բանի հետ
 համեմատած, ինչ վոր կատարվում է ԽՍՀՄ-ում: Ամերիկա-
 ցիներն ընդունում են, վոր նույնիսկ ամենաբուռն ստեղծա-
 գործական տենդային գործունեյության չըջանում արևմտյան

նահանգներում, այնտեղ մի քան չի յեղել, վոր նման լինե-
ր իՍՂՄ-ի այժմյան տենդային ստեղծագործական դոր-
ծունեյությանը: Վերջին յերկու տարում իՍՂՄ-ում այնքան
չատ փոփոխություններ են տեղի ունեցել, վոր մարդ հրա-
ժարելում է այլևս պատկերացնել, թե ինչ կլինի այդ յերկ-
րում տասը տարի ևս անցնելուց հետո... Դուրս նետեցե՞ք ձեր
գլխից անգլիական թերթերի պատմած Փանտաստիկ սարսա-
փելի պատմությունները, թերթեր, վորոնք այնպես համա-
ռորեն ու այնպես անհեթեթ կերպով ստում են իՍՂՄ-ի մա-
սին: Դուրս դրեցե՞ք ձեր գլխից նաև այն ամբողջ թերառ
ճշմարտությունն ու տպավորությունները, վորոնք հիմնված
են չհասկանալու վրա, վորոնք տարածել են դիվետանտու-
թյուն անող ինտելիգենտները, մարդիկ, վորոնք իՍՂՄ-ի
վրա նայում են հովանավորող հայացքով՝ միջին դասակարգի
ակնոցներով, բայց ամենափոքրիկ պատկերացում անգամ
չունեն, թե ինչ է կատարվում այնտեղ... իՍՂՄ-ն նոր հա-
սարակություն է կառուցում առողջ հիմքերի վրա: Այդ նպա-
տակն իրականացնելու համար պետք է ոխկի յենթարկվել,
պետք է խանդավառությամբ աշխատել, այնպիսի յեռանդով,
վորպիսին աշխարհը մինչև այժմ չի տեսել, պետք է պայքա-
րել ամենավիթխարի դժվարությունների դեմ, վորոնք ան-
խուսափելի յեն, յերբ ձգտում ես սոցիալիզմ կառուցել մեա-
ցած աշխարհից մեկուսացած լայնածավալ յերկրում: Բայց
յերկու տարվա ընթացքում կրկին անգամ այցելելով այդ
յերկիրը՝ յես այն տպավորությունն ստացա, վոր նա ընթա-
նում է հաստատուն առաջադիմության ուղիով, պլանավո-
րում, ստեղծագործում ու կառուցում է, և այդ ամենն այն-
պիսի մասշտաբով, վոր պայծառ մարտահրավեր է հանդի-
սանում թշնամի կապիտալիստական աշխարհի հասցեյին»:

Այսպիսի տարածայնություն ու պառակտում կա բուրժուա-
կան շրջանների բանակում, վորոնցից վոմանք կողմնակից են
իՍՂՄ-ի վոնչացմանն իր իբրև թե տալալված հնդամյա պլանի
հետ միասին, իսկ մյուսներն, ըստ յերևութին, կողմնակից են
առևտրական համագործակցության իՍՂՄ-ի հետ, ակներևաբար
հույս ունենալով, թե հնդամյա պլանի հաջողություններից կա-
րելի կլինի վորոշ ողուտ քաղել իրենց համար:

Առանձին տեղ է բռնում այն հարցը, թե կապիտալիստական
յերկիրների բանվոր դասակարգն ինչ վերաբերմունք ունի դեպի
հնդամյակի հարցը, դեպի իՍՂՄ-ի սոցիալիստական շինարարու-

թյան հանդուրժյունների հարցը: Այստեղ կարելի չէր սահմանա-
փակվել՝ բերելով ամեն տարի իՍՀՄ յեկող բազմաթիվ բանվոր-
քական պատվիրակութուններից մեկի, թեկուզ, որինակ, բել-
գիական բանվորական պատվիրակության կարծիքը: Այդ կարծի-
քը տիպիկ է բանվորական առանց բացառության բոլոր պատվի-
րակությունների համար, միևնույն է՝ խոսքը վերաբերում է ար-
դյոք անգլիական թե ֆրանսական պատվիրակությանը, գերմա-
նական թե ամերիկյան, թե այլ յերկիրների պատվիրակություն-
ներին: Ահա այն.

«Մենք հիացած ենք այն վիթխարի շինարարությամբ,
վոր մենք դիտում եյինք մեր ճանապարհորդության ժամա-
նակ: Մոսկվայում, ինչպես և Մակեյեվկայում, Գոռլովկա-
յում, Խարկովում ու Լենինգրադում, մենք կարողացանք ար-
ձանագրել, թե ինչպիսի խանդավառությամբ են աշխատում
այնտեղ: Բոլոր մեքենաները նորագույն կառուցվածք ունեն:
Գործարաններում տիրում է մաքրություն, ողն ու լույսը
չատ է: Մենք տեսանք, թե ինչպես է իՍՀՄ-ում բժշկական
ու օանիտարական ողնություն ցույց տրվում բանվորներին:
Բանվորական բնակարանները կառուցված են գործարաններին
մոտիկ: Բանվորական քաղաքամասերում կադմակերպված են
դպրոցներ ու մսուրներ. յերեխաները չըջալատված են ա-
մենախնամոտ հոգատարությամբ: Մենք կարողացանք տես-
նել տարբերությունը հին ու նորակառույց գործարանների
միջև, հին ու նոր բնակարանների միջև: Այն ամենը, ինչ վոր
մենք տեսանք, պարզ պատկերացում տվեց մեզ այն աշխատա-
վորների վիթխարի ուժի մասին, վորոնք նոր հասարակու-
թյուն են կառուցում կոմունիստական կուսակցության ղեկա-
վարությամբ: Մենք իՍՀՄ-ում մեծ կուլտուրական վերելք
տեսանք այն ժամանակ, յերբ մյուս յերկիրներում անկում է
տիրում բոլոր բնազավառներում, տիրում է գործազրկու-
թյուն: Մենք կարողացանք տեսնել, թե ինչպիսի սոսկալի
դժվարությունների յեն հանդիպում խորհրդային աշխատա-
վորներն իրենց ճանապարհին: Ե՛լ ավելի մեծ չափով մենք
հասկանում ենք այն հպարտությունը, վորով նրանք մեզ
ցույց են տալիս իրենց հաղթությունները: Մենք համոզված
ենք, վոր նրանք կհաղթահարեն բոլոր խոչընդոտները»:
Ահա ձեզ հնգամյակի միջադպրային նշանակությունը: Բավա-
րան եր, վոր մենք շինարարական աշխատանք կատարելինք ինչ-
վոր յերկու-յերեք տարվա ընթացքում, բավական եր ցույց տալ

Հնգամյակի առաջին Հաջողությունները, վորպեսպէ՛ր ամբողջ աշխարհը յերկու բանակի բաժանուիւր—այնպիսի մարդկանց բանակի, վորոնք անդադրում Հաջում են մեզ վրա, և այնպիսի մարդկանց բանակի, վորոնք ապշած են Հնգամյակի Հաջողություններից, եւ չենք խոսում այն մասին, վոր դոյություն ունի և ուժեղանում և մեր սեփական բանակն ամբողջ աշխարհում,—կապիտալիստական յերկիրների բանվոր դասակարգի բանակը, վորն ուրախանում և խՈՎՅՈՒՄ—ի բանվոր դասակարգի Հաջողություններով և պատրաստ և ոգնություն ցույց տալու նրան՝ ի սարսափ ամբողջ աշխարհի բուրժուազիայի:

Ի՞նչ է նշանակում այդ:

Այդ նշանակում է, վոր Հնգամյակի միջազգային նշանակությունը, նրա Հաջողությունների ու նվաճումների միջազգային նշանակությունը— կասկածի յենթակա չէ:

Այդ նշանակում է, վոր կապիտալիստական յերկիրները հզի յեն պրոլետարական հեղափոխությամբ, և հենց այն պատճառով, վոր նրանք հզի յեն պրոլետարական հեղափոխությամբ, բուրժուազիան կկամենար Հնգամյակի անհաջողությունների մեջ նոր փաստարկ քաղել հեղափոխության դեմ, մինչդեռ պրոլետարիատը, ընդհակառակը, աշխատում է Հնգամյակի Հաջողություններից նոր փաստարկ քաղել և իրոք քաղում է հոգուտ հեղափոխության, ընդդեմ ամբողջ աշխարհի բուրժուազիայի:

Հնգամյակի հաջողությունները մոքիլիգացիայի յեն յենքարկում բոլոր յերկիրների բանվոր դասակարգի հեղափոխական ուժերը կապիտալիզմի դեմ,—այս է անվիճելի փաստը:

Ձի կարող տարակույս լինել, վոր Հնգամյակի միջազգային հեղափոխական նշանակությունն իրոք անչափելի յէ:

Ե՛ւ ավելի մեծ ուշադրությամբ պետք է վերաբերուինք մենք Հնգամյակի Հարցին, Հնգամյակի բովանդակության, Հնգամյակի հիմնական խնդիրների Հարցին:

Ե՛ւ ավելի մեծ խնամքով պետք է մենք վերլուծենք Հնգամյակի Հանրազումարները, Հնգամյա պլանի կատարման ու կենսադործման Հանրազումարները:

ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ՅԵՎ ՆՐԱ ԿԵՆՍԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆ

Անցնենք հնգամյա պլանի հարցին ըստ ելության:
Ի՞նչ է հնգամյա պլանը:

Վո՞րն եք հնգամյա պլանի հիմնական խնդիրը:

Հնգամյակի հիմնական խնդիրն եր՝ հետամնաց և հաճախ
միջնադարյան տեխնիկա ունեցող մեր յերկիրը փոխադրել նոր,
ժամանակակից տեխնիկայի ուղիների վրա:

Հնգամյակի հիմնական խնդիրն եր՝ ԽՍՀՄ-ն ագրարային ու
անդոր, կապիտալիստական յերկիրներին քառահարկյուններից կախ-
ված յերկրից փոխարկել միանգամայն ինքնուրույն և համաշ-
խարհային կապիտալիզմի քառահարկյուններից անկախ՝ ինդուստ-
րիալ ու հզոր յերկիր:

Հնգամյակի հիմնական խնդիրն եր՝ փոխարկելով ԽՍՀՄ-ն
ինդուստրիալ յերկրի, — մինչև վերջը դուրս մղել կապիտալիստա-
կան տարրերին, ընդարձակել տնտեսության սոցիալիստական ձե-
վերի ճակատը և տնտեսական բազա ստեղծել՝ ԽՍՀՄ-ում դա-
ստակարգերը վճռահանելու համար, սոցիալիստական հասարա-
կություն կառուցելու համար:

Հնգամյակի հիմնական խնդիրն եր՝ ստեղծել մեր յերկրում
այնպիսի ինդուստրիա, վորն ընդունակ լինեք սոցիալիզմի հիմքի
վրա վերադինելու և վերակազմելու վո՛չ միայն արդյունաբերու-
թյունն իբրև ամբողջություն վերցրած, այլև տրանսպորտը, այլև
գյուղատնտեսությունը:

Հնգամյակի հիմնական խնդիրն եր՝ փոխադրել մանր և ցի-
րուցան գյուղատնտեսությունը խոշոր կոլեկտիվ տնտեսության
ուղիների վրա, դրանով իսկ առահոգել սոցիալիզմի տնտեսական

բազան դյուղում և այդպիսով վերացնել ԽՍՀՄ-ում կապիտալիզմը վերականգնելու հնարավորութունը:

Վերջապես, հնդամյա պլանի խնդիրն եր՝ ստեղծել յերկրում տեխնիկական ու տնտեսական բոլոր անհրաժեշտ նախադրյալները՝ առավելագույն չափով բարձրացնելու համար յերկրի պաշտպանունակութունը, վոր հնարավորութուն է տալիս վճռական դիմադրութիւն կազմակերպելու դրսից յեկող ռազմական ինտեր-վենցիայի բոլոր ու ամեն տեսակ փորձերին, դրսից ռազմական հարձակում դործելու բոլոր ու ամեն տեսակ փորձերին:

Ի՞նչն եր թելադրում հնդամյակի այդ հիմնական խնդիրը, ինչո՞ւ եր հիմնավորվում այն:

Խորհրդային Միութեան տեխնիկական-տնտեսական հետամնացութիւնը լիկվիդացիայի յենթարկելու անհրաժեշտութեամբ, հետամնացութիւն, վոր նրան աննախանձելի դոյութեան է դատարարում, յերկրում այնպիսի նախադրյալներ ստեղծելու անհրաժեշտութեամբ, վորոնք նրան հնարավորութիւն տային վո՛չ միայն հասնելու տեխնիկա-տնտեսական տեսակետից առաջավոր կապիտալիստական յերկիրներին, այլև ժամանակին նաև անցնելու նրանցից:

Այն նկատառումով, վոր խորհրդային իշխանութիւնը չի կարող յերկար դիմանալ հետամնաց արդյունաբերութեան բազայի վրա, վոր միմիայն ժամանակակից խոշոր արդյունաբերութիւնը, վորը վո՛չ միայն չի ղիջում կապիտալիստական յերկիրներին արդյունաբերութեանը, այլև կարող է ժամանակին գերազանցել նրանից—խորհրդային իշխանութեան համար կարող է իրական ու վստահելի պատվանդան ծառայել:

Այն նկատառումով, վոր խորհրդային իշխանութիւնը չի կարող յերկար ժամանակ հենվել յերկու հակադիր հիմքերի վրա,— խոշոր սոցիալիստական արդյունաբերութեան վրա, վոր վոչնչացնում է կապիտալիստական տարրերին, և դյուղացիական մանր միանձնյա տնտեսութեան վրա, վոր կապիտալիստական տարրեր է ծնում:

Այն նկատառումով, վոր քանի դեռ դյուղատնտեսութեան համար խոշոր արտադրութեան բազա չի ստեղծված, քանի դեռ դյուղացիական մանր տնտեսութիւնները չեն միավորվել խոշոր կոլեկտիվ տնտեսութիւնների մեջ,—ԽՍՀՄ-ում կապիտալիզմի վերականգնման վտանգն ամենաիրական վտանգն է հնարավոր բոլոր վտանգներէից:

Լենինն ասում եր.

«Հեղափոխութիւնն արեց այն, վոր Ռուսաստանն իր քաղաքական կարգերով միջանի ամսում հասավ առաջավոր յերկիրներին:

Բայց այդ քիչ է: Պատերազմն անողոք է. նա հարցը դնում է դաժան սրութեամբ. կա՛մ կործանուել, կա՛մ հոտնել առաջավոր յերկիրներին ու անցնել նրանցից նաև տնտեսապես: Կործանուել, կամ ամբողջ թափով առաջ սլանալ: Այսպես է դրել հարցը պատմութիւնը» (տե՛ս հ. XXI, էջ 191): Լենինն ասում եր.

«Քանի դեռ մենք ապրում ենք մանր դյուզացիական յերկրում, կապիտալիզմի համար Ռուսաստանում ավելի հաստատուն տնտեսական բաղա կա, քան կոմունիզմի համար: Այս անհրաժեշտ է հիշել: Յուրաքանչյուր վոր, ով ուշադրութեամբ դիտել է դյուզի կյանքը՝ համեմատելով այն քաղաքի կյանքի հետ, դիտե, վոր մենք կապիտալիզմի արմատները դուրս չենք քաշել և ներքին թշնամու ֆունդամենտը, հիմքը չենք խաբխել: Վերջինս դիմանում է՝ հենվելով մանր տնտեսութեան վրա, և այն խաբխելու համար մի միջոց կա՝ յերկրի տնտեսութիւնը, այդ թիւում նաև հողադուրծութիւնը, փոխադրել տեխնիկական նոր բաղադրի վրա, ժամանակակից խոշոր արտադրութեան տեխնիկական բաղադրի վրա... Միմիայն այն ժամանակ, յերբ յերկիրն ելեկտրիֆիկացիայի յենթարկված կլինի, յերբ արդյունաբերութիւնը, դյուզատնտեսութիւնն ու տրանսպորտը հիմնված կլինեն ժամանակակից խոշոր արդյունաբերութեան տեխնիկական բաղադրի վրա, միմիայն այն ժամանակ մենք վերջնականապես կհաղթենք» (տե՛ս հ. XXVI, էջ 46—47):

Հենց այս դրութիւնները կազմեցին կուսակցութեան այն նկատառումների հիմքը, վորոնք հանգեցրին հնգամյա պլանի մշակմանը, վորոնք հանգեցրին հնգամյա պլանի հիմնական խնդրի վորոշմանը:

Այսպես է հնգամյա պլանի հիմնական խնդրի բանը:

Բայց այդպիսի վիթխարի պլանի իրականացումը չի կարելի սկսել ցիրուցան, վորտեղից վոր պատահի: Վորպեսզի այդ պլանն իրականացվի, պետք է ամենից առաջ դնենք պլանի հիմնական ողակը, վորովհետեւ միմիայն հիմնական ողակը դնելով ու նքրան կառչելով կարելի յեր դուրս քաշել պլանի մյուս բոլոր ողակները:

Վե՞րն եր հնգամյա պլանի հիմնական ողակը:

Հնդամյա պլանի հիմնական ողակը ծանր արդյունաբերութ-
յունն էր իր միջուկով—մեքենաշինությամբ: Վորովհետև մի-
միայն ծանր արդյունաբերությունն է ընդունակ վերակառուցելու
և վառելի կանգնեցնելու թե՛ արդյունաբերությունն ամբողջու-
թյամբ վերցրած, թե՛ տրանսպորտը, թե՛ դյուղատնտեսությու-
նը: Հենց դրանից ել պետք էր սկսել Հնդամյակի իրականացումը:
Հետևաբար, ծանր արդյունաբերության վերականգնումը պետք
էր հիմք դարձնել՝ Հնդամյա պլանն իրականացնելու համար:

Մենք ունենք Լենինի ցուցումները նաև այդ հարցի մասին.

«Ռուսաստանի համար փրկությունն է վո՛չ միայն դյու-
ղացիական տնտեսության լավ բերքը,—այս դեռ քիչ է,—և՜
վո՛չ միայն լավ վիճակը թեթեւ արդյունաբերության, վորն
սպառման առարկաներ և մատակարարում դյուղացիությա-
նը,—այս ել դեռ քիչ է,—մեզ անհրաժեշտ է նաև ծանր ին-
դուստրիա... Առանց ծանր արդյունաբերությունը փրկելու,
առանց այն վերականգնելու, մենք վո՛չ մի արդյունաբերու-
թյուն կառուցել չենք կարող, իսկ առանց սրան՝ մենք ընդ-
հանրապես կկործանվենք իբրև ինքնուրույն յերկիր... Մանր
ինդուստրիան պետական սուբսիդիաների կարիք ունի: Յեթե
մենք չգտնենք դրանք, ապա մենք, վորպես քաղաքակիրթ
պետություն—եւ չեմ ասում, վորպես սոցիալիստական պե-
տություն,—կորած ենք» (տե՛ս հ. XXVІІ, էջ 349):

Իայց ծանր ինդուստրիայի վերականգնումն ու զարգացումը,
մասնավորապես այնպիսի հետամնաց ու աղքատ յերկրում, ինչպիսին
էր մեր յերկիրը Հնդամյակի սկզբին, ամենադժվար դործն է,
վորովհետև, ինչպես հայտնի յե, ծանր ինդուստրիան պահան-
ջում է ֆինանսական հսկայական ծախսեր և փորձյաժ տեխնի-
կական ուժերի վորոշ միևմուտի առկայություն, առանց վորոնց,
ընդհանրապես ասած, անհնար է վերականգնել ծանր ինդուստ-
րիան: Գիտե՞ր արդյոք այդ մասին կուսակցությունը և հաշիվ
տալի՞ս էր արդյոք իրեն այդ մասին: Այո՛, գիտեր: Յեւ վո՛չ
միայն գիտեր, այլև հայտարարում էր այդ մասին ի լուր ամեն-
քի: Կուսակցությունը գիտեր, թե ինչ ճանապարհով էր կա-
ռուցվել ծանր ինդուստրիան Անգլիայում, Գերմանիայում, Ամե-
րիկայում: Նա գիտեր, վոր այդ յերկիրներում ծանր ինդուստ-
րիան կառուցվել էր կա՛մ խոշոր փոխառութունների ոգնությամբ,
կա՛մ ալ յերկիրներ կողոպտելու միջոցով, կա՛մ միաժամանակ
թե՛ մեկ և թե՛ մյուս ուղիով: Կուսակցությունը գիտեր, վոր
այդ ուղիները փակ են մեր յերկրի համար: Ուրեմն ինչի՞ վրա

յեր հուլիս գրել նա: Նա հուլիս եր գրել մեր յերկրի սեփական ու-
ժերի վրա: Նա հուլիս եր գրել այն բանի վրա, վոր մենք, սնն-
նալով խորհրդային իշխանութիւն և հենվելով հողի, արդյունա-
բերութեան, տրանսպորտի, բանկերի, առևտրի ազգայնացման
վրա, կարող ենք խնայողութեան ամենախիստ ռեժիմ կիրառել,
վորպեսզի ծանր ինդուստրիան վերականգնելու ու զարգացնելու
համար անհրաժեշտ բաւականաչափ միջոցներ կուտակենք: Կու-
սակցութիւնն ուղղակի ասում եր, վոր այդ գործը լուրջ զոհա-
բերութիւններ կսահանջի, վոր մենք պետք ե բացահայտորեն ու
գիտակցաբար համաձայնենք այդ զոհաբերութիւններին, յեթե
ուզում ենք նպատակին հասնել: Կուսակցութիւնը հուլիս ունեւր
այդ գործը գլուխ բերել մեր յերկրի ներքին ուժերով, առանց
գրտի ստրկացուցիչ վարկերի ու փոխառութիւնների:

Ահա թե ինչ եր ասում Լենինն այդ առթիւ:

«Մենք պետք ե աշխատենք կառուցել մի պետութիւն,
վորի մեջ բանվորները պահպանելին իրենց ղեկավարութիւ-
նը դյուղացիների նկատմամբ, դյուղացիների վստահութիւնն
իրենց վերաբերմամբ և մեծագուշն խնայողութիւն անելով՝
իրենց հասարակական հարաբերութիւններից արտաքսելին
վորեն չռայլութեան բոլոր հետքերը:

Մենք պետք ե առավելագուշն խնայողութիւն մտցնենք
մեր պետապարատի մեջ: Մենք պետք ե նրա միջից վտարենք
չռայլութիւնների բոլոր հետքերը, վորպիսի չռայլութիւն-
ներ այնքան շատ են մնացել նրա մեջ ցարական Ռուսաստա-
նից, նրա բյուրոկրատական-կապիտալիստական ասպարատից:

Արդոք այդ դյուղացիական սահմանափակվածութեան
թագավորութիւն չի՞ լինի:

Վո՛ւ: Յետեւ մենք պահպանենք բանվոր դասակարգի ղե-
կավարութիւնը դյուղացիութեան վերաբերմամբ, ապա մենք
հնարավորութիւն կստանանք տնտեսութեան մեծագուշն ու
մեծագուշն խնայողութեան ղնով մեր պետութեան մեջ հաս-
նելու այնպիսի դրութեան, վորպեսզի ամեն մի փոքրագուշն
խնայողութիւն սրահենք մեր խոշոր մեքենային ինդուստրիա-
յի զարգացման համար, ելեկտրիֆիկացիայի, հիդրոէլեկտրի-
քարգացման համար, Վոլխովստրոյի կառուցումն ավարտելու
համար և այլն:

Այս և միմիայն այս կլինի մեր հուլիսը: Միայն այն ժա-
մանակ մենք ի վիճակի կլինենք, պատկերավոր կերպով ա-
սած, մի ձիուց նստել մյուս ձին, այն ե՝ դյուղացիական,

դեղջկական, աղքատացած ձիուց, քայքայված դուռը տղիական յերկիրը նկատելու ունեցող տնտեսումների ձիուց նստել այն ձին, վորը վորոնում է և չի կարող չվորոնել իրեն համար պրոլետարիատը,—խոշոր մեքենային ինդուստրիայի, ելեկտրիֆիկացիայի, Վոլխովստրոյի և այլն ձին» (տե՛ս ս. XXVII, էջ 417) :

Աղքատացած դեղջկական ձիուց նստել խոշոր մեքենային ինդուստրիայի ձին,—ահա թե ինչ նպատակ էր հետապնդում կուսակցութունը՝ մշակելու՛ հնդամյա պլանը և ձգտելու՛ հասնել նրա իրականացմանը :

Սահմանել խնայողության ամենախիտ ուժի՞մ և կուսակցի մեր յերկրի ինդուստրացումը ֆինանսավորելու համար անհրաժեշտ միջոցներ,—ահա թե ինչ ճանապարհ պետք էր բռնել՝ ծանր ինդուստրիայի վերականգնման ու հնդամյա պլանի իրականացման հասնելու համար :

Խիղա՞խ խնդիր է, դժվարի՞ն ուղի : Բայց մեր կուսակցութունը հենց նրա համար է կոչվում լենինյան կուսակցութուն, վոր նա իրավունք չունի վախենալու դժվարություններից :

Դեռ ավելին : Կուսակցության համոզվածութունը հնդամյա-կի իրագործելիության վերաբերմամբ և վստահությունը դեպի բանվոր դասակարգի ուժերն այնքան ուժեղ էին, վոր կուսակցութունը հնարավոր դատվ իր առաջ խնդիր դնել՝ իրականացնելու այդ դժվարին դործը վո՛չ թե հինգ տարում, ինչպես այդ պահանջում էր հնդամյա պլանը, այլ չորս տարում, իսկապես՝ չորս տարի և յերեք ամսում, յեթե ավելացնենք հատուկ յեռամսյակը :

Այդ հիման վրա ել ծնվեց «Հնդամյակը չորս տարում» հռչակավոր լոգունդը :

Յեւ ի՞նչ :

Փաստերը հետադաշում ցույց տվին, վոր կուսակցութունն իրավացի էր :

Փաստերը ցույց տվին, վոր առանց այդ խիղախության և առանց բանվոր դասակարգի ուժերի նկատմամբ վստահ լինելուն, կուսակցութունը չեր կարող ձեռք բերել այն հաղթությունը, վորով այժմ իրավամբ հպարտանում ենք մենք :

ՉՈՐՍ ՏԱՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՀԱՆՐԱՅ ԳՈՒՄԱՐՆԵՐՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Այժմ անցնենք հնգամյա սլանի իրականացման հանրապո-
ժարների հարցին:

Վորո՞նք են չորս տարում կատարված հնգամյակի հանրա-
պոժարներն արդյունաբերության բնագավառում:

Հաղթություն ձեռք բերե՞նք արդյոք մենք այդ բնագավա-
ռում:

Այո՛, ձեռք բերինք: Յեւ Վո՛չ միայն ձեռք բերինք, այլև
սլանի չափ քան արինք, քան սպասում էինք մենք ինքներս, քան
կարող էին սպասել մեր կուսակցություն ամենատաք գլուխները:
Այժմ այդ չեն ժխտում նույնիսկ թշնամիները: Առավել ևս այդ
չեն կարող ժխտել մեր բարեկամները:

Մենք չունեյինք սև մետաղագործություն, յերկրի ինդուս-
տրացիան հիմքը: Այժմ մենք ունենք այն:

Մենք չունեյինք տրակտորային արդյունաբերություն: Այժմ
մենք ունենք այն:

Մենք չունեյինք ավտոմոբիլային արդյունաբերություն:
Այժմ մենք ունենք այն:

Մենք չունեյինք հաստոցաշինություն: Այժմ մենք ունենք
այն:

Մենք չունեյինք լուրջ և ժամանակակից քիմիական արդյու-
նաբերություն: Այժմ մենք ունենք այն:

Մենք չունեյինք իսկական և լուրջ արդյունաբերություն՝ ժա-
մանակակից գյուղատնտեսական մեքենաների արտադրության հա-
մար: Այժմ մենք ունենք այն:

Մենք չունեյինք ավիացիոն արդյունաբերութիւն: Այժմ մենք ունենք այն:

Շէկարական եներգիւս արտադրելու իմաստով մենք կանգնած եյինք ամենավերջին տեղում: Այժմ մենք առաջ ենք անցել առաջին տեղերից մեկը:

Նալթապրոդուկտների ու անխի արտադրութեան իմաստով մենք կանգնած եյինք վերջին տեղում: Այժմ մենք առաջ ենք անցել առաջին տեղերից մեկը:

Մենք ունեյինք միմիայն մեկ միակ անխա-մետաղադործական բաղա-Ուելրախնայում, մի բաղա, վոր դժվարութեամբ եյինք կառավարում: Մենք հասանք այն բանին, վոր վո՛չ միայն բարձրացրինք այդ բաղան, այլև ստեղծեցինք մի նոր անխա-մետաղադործական բաղա—Արևելքում, վոր մեր յերկրի հարարութեանն է կազմում:

Մենք ունեյինք տեքստիլ արդյունաբերութեան միմիայն մեկ միակ բաղա—մեր յերկրի Հյուսիսում: Մենք հասանք այն բանին, վոր ամենամոտ ժամանակում կունենանք տեքստիլ արդյունաբերութեան յերկու նոր բաղա — Միջին Ասիայում ու Արևմտեան Սիբիրում:

Յեւ վ մենք վո՛չ միայն ստեղծեցինք արդյունաբերութեան այդ նոր վիթխարի ճյուղերը, այլև մենք ստեղծեցինք դրանք այնպիսի մասշտաբով ու այնպիսի չափերով, վորոնց առաջ նսեմանում են յեւրոպական ինդուստրիայի մաշտաբներն ու չափերը:

Իսկ այդ ամենի հետևանքն այն յեղով, վոր կապիտալիստական տարրերը վերջնականապես ու անվերադարձ կերպով դուրս են մղված արդյունաբերութեանից, իսկ սոցիալիստական արդյունաբերութեանը դարձել է ինդուստրիայի միակ ձեւը ԽՍՀ Միութեանում:

Իսկ այդ ամենի հետևանքն այն յեղով, վոր մեր յերկիրն ագրարային յերկրից դարձավ ինդուստրիալ յերկիր, վորովհետև արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռը դուրստըն-տեսականի նկատմամբ հնդամյակի սկզբի (1928 թ.) 48%-ից հնդամյակի չորրորդ տարւա (1932 թ.) վերջերքին բարձրացավ հասաւ 70%-ի:

Իսկ այդ ամենի հետևանքն այն յեղով, վոր հնդամյակի չոր-րորդ տարւա վերջերքին մեզ հաջողից կատարել ընդհանուր ար-դյունաբերական արտադրութեան հինգ տարւա ծրագիրն 93,7 տոկոսով, բարձրացնելով արդյունաբերական արտադրանքի ծա-վաւն ավելի քան յերեք անգամ՝ համեմատա՝ մինչպատերազմեան

մաշկադրակի հետ և ավելի քան յերկու անգամ—համեմատած 1928 թվի մակարդակի հետ: Ինչ վերաբերում է ծանր արդյունաբերության արտադրանքի ծրագրին, ապա մենք հնդամյա պլանը կատարեցինք 108%-ով: Ճիշտ է, մենք այստեղ հնդամյակի ընդհանուր ծրագիրը թերահատարեցինք 6%-ով: Բայց այդ բացատրվում է նրանով, վոր նկատի ունենալով հարևան յերկրներին հրաժարվելը մեզ հետ հարձակվելու պակտեր կնքելուց և Հեռավոր Արևելքում տեղի ունեցած բարդությունները, մենք ստիպված յեղանք, յերկրի պաշտպանությունն ուժեղացնելու նպատակով, մի շարք գործարաններ շտապ կերպով փոխադրել պաշտպանության ժամանակակից գործիքների արտադրությանը: Իսկ այդ փոխադրումը, վորի համար անհրաժեշտ էր անցնել նախապատրաստական փուլի շրջան, այն հետևանքն ունեցավ, վոր այդ գործարանները չորս ամիս դադարեցրին իրենց արտադրությունը, իսկ այդ չեք կարող չանդրադառնալ 1932 թվականի ընթացքում արտադրության ընդհանուր ծրագիրը հնդամյա պլանի համաձայն կատարելու վրա: Այդ ոպերացիայի հետևանքն այն յեղավ, վոր մենք ամբողջովին ու լիովին վերացրինք յերկրի պաշտպանունակության գործում գոյություն ունեցող բացերը: Բայց այդ չեք կարող բացասաբար չանդրադառնալ արտադրության ծրագիրն ըստ հընդամյա պլանի կատարելու վրա: Վոչ մի տարակույս չի կարող լինել, վոր առանց այդ միջանկյալ հանդամանքի մենք վո՛չ միայն կկատարեյինք, այլև անշուշտ կդերակատարեյինք հնդամյա պլանի թվական մասը:

Վերջապես, այդ ամենի հետևանքն այն յեղավ, վոր Խորհրդային Միությունը թույլ և պաշտպանության համար անպատրաստ յերկրից վերածվեց հզոր յերկրի՝ պաշտպանունակության իմաստով, մի յերկրի, վորը պատրաստ է ամեն տեսակ պատահականությունների հանդեպ, մի յերկրի, վորն ընդունակ է մասսայական մասշտաբով արտադրելու պաշտպանության բոլոր ժամանակակից գործիքները և մատակարարելու դրանք իր բանակին՝ դրսից կատարվող հարձակման դեպքում:

Ընդհանուր առմամբ սրանք են չորս տարում կատարված հնդամյակի հանրագումարներն արդյունաբերության բնագավառում:

Այժմ ինքներդ դատեցեք. այդ ամենից հետո ի՞նչ արժեք ուրժուական մամուլի չազակրատությունը հնդամյակի «տապալման» մասին արդյունաբերության բնագավառում:

Իսկ ի՞նչպես է կապիտալիստական յերկրներին բանը, վորոնք

ձեռնարկում ևս դաժան ճգնաժամ են ապրում՝ նրանց արդյունաբերական արտադրանքի աճման իմաստով:

Ահա բոլորին հայտնի պաշտոնական տվյալները:

Այն ժամանակ, յերբ ԽՍՀՄ-ի արդյունաբերական արտադրանքի ծավալը, համեմատած մինչպատերազմյան մակարդակի հետ, 1932 թվի վերջերքին անել է 334%-ով, ՀԱՄՆ-ի արդյունաբերական արտադրանքի ծավալը նույն ժամանակաշրջանում իջել է մինչպատերազմյան մակարդակի 84%-ին, Անգլիայինը—75 տոկոսին, Գերմանիայինը—62%-ին:

Այն ժամանակ, յերբ ԽՍՀՄ-ի արդյունաբերական արտադրանքի ծավալը 1932 թվի վերջերքին, համեմատած 1928 թ. մակարդակի հետ, անել—հասել է 219%-ի, ՀԱՄՆ-ի արդյունաբերական արտադրանքի ծավալը նույն ժամանակաշրջանում իջել է 56%-ի, Անգլիայինը—80%-ի, Գերմանիայինը—55%-ի, Լեհաստանինը—54%-ի:

Ինչի՞նչ մասին են խոսում այս տվյալները, յեթե վոչ այն մասին, վոր արդյունաբերություն կապիտալիստական սխտեմը քըննուծյուն չըտնեց խորհրդային սխտեմի հետ ունեցած իր մրցություն մեջ. վոր արդյունաբերություն խորհրդային սխտեմը բոլոր առավելություններն ունի կապիտալիստական սխտեմի հանդեպ:

Մեզ ասում են, թե այդ ամենը լավ է, կառուցվել են շատ նոր գործարաններ, դրված է ինդուստրացման հիմքը: Բայց շատ ավելի լավ կլիներ հրաժարվել ինդուստրացման քաղաքականությունից, արտադրություն միջոցների արտադրությունն ընդարձակելու քաղաքականությունից, կամ գոնե հետաձգել այդ գործը հետին պլանը՝ ավելի շատ չիթ, վոտնաման, հագուստ և այլն սպառման այլ առարկաներ արտադրելու համար: Լայն ըստ սպառման առարկաներ ավելի քիչ են արտադրվել, քան հարկավոր է, իսկ դա վորոշ զգալիություններ է ստեղծում:

Բայց այդ դեպքում պետք է զիտենալ և պետք է հաշիվ տալ իրեն, թե ուր կտաներ մեզ ինդուստրացման խնդիրները հետին պլանը մղելու նմանորինակ քաղաքականությունը: Իհարկե, մենք կարող եյինք այդ ժամանակաշրջանում մեր ծանր արդյունաբերության սարքավորման վրա ծախսված մեկուկես միլիարդ ռուբլու վալյուտայի կեսը հատկացնել բամբակի, կաշվի, բրդի, կառուցողի և այլնի ներմուծմանը: Այն ժամանակ մենք ավելի շատ չիթ, վոտնաման, հագուստ կունենայինք: Բայց այն ժամանակ մենք չեյինք ունենա վոչ տրակտորային, վոչ ավտոմոբիլային

արդյունաբերություն, չեյինք ունենա քիչ թե շատ լուրջ և մե-
տաղազործություն, չեյինք ունենա մետաղ՝ մեքենաներ արտա-
գրելու համար,—և մենք անդէն կդառնայինք նոր տեխնիկայով
զինված կապիտալիստական շրջապատման հանդէս: Այն ժամա-
նակ մենք մեզ զրկած կլինեյինք դյուղատնտեսությանը տրակտոր-
ներ ու դյուղատնտեսական մեքենաներ մատակարարելու հնարա-
վորությունից,—հետևապէս մենք առանց հացի կմնայինք:
Մենք մեզ զրկած կլինեյինք յերկրում կապիտալիստական
տարրերի դեմ հաղթություն տանելու հնարավորությունից,—
հետևապէս մենք անչափ կբարձրացնէինք կապիտալիզմի
վերականգնման շանսերը: Այն ժամանակ մենք չեյինք ու-
նենա պաշտպանության այն բոլոր ժամանակակից միջոցները,
առանց վորոնց հնարավոր չէ յերկրի պետական անկախությունը,
առանց վորոնց յերկիրն արտաքին թշնամիների ռազմական ուժե-
րացիաների որջեկտի յե վերածվում: Այն ժամանակ մեզ դրու-
թյունն ավելի կամ պակաս չափով նման կլինէր ներկա Զինա-
տանի դրությանը, վորը չունի իր ծանր արդյունաբերությունը,
չունի իր ռազմական արդյունաբերությունը, և վորին այժմ կըտ-
ցահարում են բոլորը, ովքեր չեն ալարում:

Մի խոսքով՝ այդպիսի դեպքում մենք կունենայինք ռազմա-
կան ինտերվենցիա, վո՛չ թե չհարձակվելու պակտեր, այլ պա-
տերազմ, վտանգավոր ու մահացու պատերազմ, արյունահեղ ու
անհաւասար պատերազմ, վորովհետեւ այդ պատերազմում մենք
համարյա թե անդէն կլինեյինք այն թշնամիների հանդէս, վո-
րոնք իրենց տրամադրության տակ ունեն հարձակման ժամանա-
կակից բոլոր միջոցները:

Ահա թե գործն ինչ կերպարանք է ստանում, ընկերներ:

Պարզ է, վոր իրեն հարզոդ պետական իշխանությունը, իրեն
հարզոդ կուսակցությունը չէր կարող այդպիսի կորստարեւ տե-
սակետի վրա կանգնել:

Յեւ չենց այն պատճառով, վոր կուսակցությունը մերժեց
այդպիսի հակահեղափոխական դիրքավորումը,—հենց այդ պատ-
ճառով նա վճռական հաղթություն տարավ հնդամյա պլանն ար-
դյունաբերության բնադաւառում կատարելու գործում:

Իրականացնելով հնդամյակը և կազմակերպելով հաղթու-
թյունն արդյունաբերական շինարարության բնադաւառում՝ կու-
սակցությունն արդյունաբերության զարգացման ամենից ավելի
արագացված տեմպերի քաղաքականություն էր կիրառում: Կու-

սակցությունն, ասես, քչելիս լինե՞ր յերկիրը, արագացնելով նրա առաջընթաց վազըը:

Ճիշտ եր վարվում արդյոք կուսակցությունը, կիրառելով ամենից ավելի արագացված տեմպերի քաղաքականությունը:

Այո՛, անպայման ճիշտ:

Զի կարելի չտապ կերպով առաջ չմղել այն յերկիրը, վորը հետ ե մնացել 100 տարով, և վորին նրա հետամնացության պատճառով մահացու վտանգ ե սպառնում: Միմիայն այդպիսով կարելի չե՞ր հնարավորություն տալ յերկրին՝ արագորեն վերադինվելու նոր տեխնիկայի բազայի վրա և վերջապես դուրս գալու լայն ճանապարհ:

Այնուհետև, մենք չեյինք կարող գիտենալ, թե իմպերիալիստները վոր ուրը կհարձակվեն իՍՀՄ-ի վրա և կընդհատեն մեր չինարաբությունը. իսկ վոր նրանք ամեն բոպե կարող եյին հարձակվել, ողտվելով մեր յերկրի տեխնիկական-տնտեսական թուլությունից, — այդ մասին տարակույս չե՞ր կարող լինել: Այդ պատճառով կուսակցությունը հարկադրված եր առաջ քշել յերկիրը, վորպեսզի ժամանակը ձեռքից չթողնի, մինչև վերջն ողտադործի դադարը և կարողանա իՍՀՄ-ում ստեղծել ինդուստրացման հիմքերը, վորոնք նրա հզորության բազան են: Կուսակցությունը հնարավորություն չունե՞ր սպասելու ու մանեվրելու և նա պարտավոր եր ամենից ավելի արագացված տեմպերի քաղաքականություն կիրառել:

Վերջապես, կուսակցությունը պետք ե ըստ կարելույն կարճ ժամկետում վերջ տար յերկրի թուլությանը. պաշտպանության ասպարեզում: Մոմենտի պայմանները, սպառազինությունների աճումը կապիտալիստական յերկրներում, ղինաթափման դադարի տապալումը, միջադպին բուրժուազիայի տալությունը դեպի իՍՀՄ-ն, — այդ ամենը դրդում եր կուսակցությանը, վորպեսզի նա արագացնի յերկրի պաշտպանունակության՝ նրա անկախության հիմքի՝ ուժեղացման գործը:

Բայց կուսակցությունն արդյոք ունալ հնարավորություն ունե՞ր իրականացնելու ամենից ավելի արագացված տեմպերի քաղաքականությունը: Այո՛, ունե՞ր: Նա այդ հնարավորությունն ունե՞ր վո՛չ միայն այն պատճառով, վոր ժամանակին կարողացավ թափ տալ յերկիրն արագ առաջխաղացման վողով, այլ ամենից առաջ այն պատճառով, վոր նա նոր լայն շինարարության դորժում կարող եր հենվել հին կամ նորոգված այն դորժարանների ու ֆաբրիկաների վրա, վորոնք արդեն յուրացված եյին բանվոր-

ների ու ինժեներներ— տեխնիկական անձնակազմի կողմից և վորոնք
գերա շնորհիվ հնարավորութուն ելին տալիս իրականացնելու
զարգացման ամենից ավելի արագացված տեմպերը:

Ահա թե ինչ հիմքի վրա անցյին մեզ մոտ առաջին հնգամյա-
կի ժամանակաշրջանում նոր շինարարության արագ վերելքը,
ծավալուն շինարարության պաթոսը, նոր շինարարությունների
հերոսներն ու հարվածայինները, զարգացման բուռն տեմպերի
պրակտիկան:

Կարելի՞ չէ արդյոք ասել, վոր յերկրորդ հնգամյակում ևս
հարկավոր կլինի ամենից ավելի արագացված տեմպերի ճիշտ
նույն քաղաքականութունը կիրառել:

Վո՛չ, չի կարելի այդ ասել:

Նախ՝ հնգամյակի հաջող կենսագործման շնորհիվ մենք հիմ-
նականում արդեն իրականացրինք նրա գլխավոր խնդիրը— ժամա-
նակակից նոր տեխնիկայի բազա ստեղծելիքը արդյունաբերու-
թյան, տրանսպորտի, գյուղատնտեսության համար: Արժե՞ ար-
դյոք դրանից հետո առաջ քշել ու շտապեցնել յերկիրը: Պարզ է,
վոր այժմ դրա անհրաժեշտութունը չկա:

Յերկրորդ, հնգամյակի հաջող կատարման հետևանքով մեզ
արդեն հաջողվեց պատշաճ բարձրության հասցնել յերկրի պաշտ-
պանունակութունը: Արժե՞ արդյոք դրանից հետո առաջ քշել ու
շտապեցնել յերկիրը: Պարզ է, վոր այժմ դրա անհրաժեշտու-
թյունը չկա:

Վերջապես, հնգամյակի հաջող կատարման հետևանքով մեզ
հաջողվեց կառուցել տասնյակ ու հարյուրավոր նոր մեծ գործա-
րաններ ու կոմբինատներ, վորոնք նոր բարդ տեխնիկա ունեն:
Այդ նշանակում է, վոր յերկրորդ հնգամյակում արդյունաբերա-
կան արտադրանքի ընդհանուր ծավալի մեջ հիմնական դեր են
խաղալու արդեն վո՛չ թե հին գործարանները, վորոնց տեխնիկան
արդեն յուրացված է, ինչպես այդ տեղի ունեն առաջին հնգա-
մյակի ժամանակաշրջանում, այլ նոր գործարանները, վորոնց
տեխնիկան դեռ չի յուրացված և վորը պետք է յուրացնել: Բայց
նոր ձեռնարկությունների ու նոր տեխնիկայի յուրացումը շատ
ավելի մեծ դժվարություններ է ներկայացնում, քան հին կամ
նորոգված այն գործարանների ու ֆաբրիկաների ողտադործումը,
վորոնց տեխնիկան արդեն յուրացված է: Այդ յուրացումն ավելի
շատ ժամանակ է պահանջում՝ բանվորների ու ինժեներներ-տեխնի-
կական անձնակազմի վորակավորումը բարձրացնելու և նոր տեխ-
նիկայի լրիվ ողտադործման նոր հմտություններ ձեռք բերելու

Համար: Այս ամենից հետո մի՞թե պարզ չէ, վոր յեթե մենք նույնիսկ կամենայինք, յերկրորդ հնդամյակում, մանավանդ յերկրորդ հնդամյակի առաջին յերկու-յերեք տարում, չեյինք կարողանա իրականացնել զարգացման ամենից ավելի արտադրված տեմպերի քաղաքականութիւնը:

Ահա թե ինչու յես կարծում եմ, վոր յերկրորդ հնդամյակի Համար մեզ պետք կլինի արդյունաբերական արտադրանքի աճման ավելի պակաս արտադրված տեմպեր վերցնել: Առաջին հնդամյակի ժամանակաշրջանում արդյունաբերական արտադրանքի տարեկան աճը միջին հաշվով կազմում էր 22%: Յես կարծում եմ, վոր յերկրորդ հնդամյակի Համար պետք կլինի ընդունել արդյունաբերական արտադրանքի տարեկան աճի 13—14% միջին հաշվով: Կապիտալիստական յերկիրների Համար արդյունաբերական արտադրանքի աճի այդպիսի տեմպն անհասանելի իդեալ է: Յեւ վո՛չ միայն արդյունաբերական արտադրանքի աճի այդպիսի տեմպը, — նույնիսկ տարեկան միջին աճի 5%-ը նրանց Համար այժմ անհասանելի իդեալ է: Բայց դրա Համար եւ նրանք կապիտալիստական յերկիրներ են: Այլ բան է խորհրդային յերկիրը՝ տնտեսութեան խորհրդային սխտեմով: Տնտեսութեան մեր սխտեմի պայմաններում մենք լիակատար հնարավորութիւն ունենք և պետք է իրականացնենք արտադրանքի տարեկան աճի 13—14%-ը վորպես մի նիւմուր:

Առաջին հնդամյակի ժամանակաշրջանում մենք կարողացանք կազմակերպել նոր շինարարութեան խանդավառութիւնը, դաժոյր և վճռողական հաջողութիւններ ձեռք բերինք: Այդ շատ լաւ է: Բայց այժմ այդ քիչ է: Այժմ այդ գործը մենք պետք է լրացնենք նոր գործարանների ու նոր տեխնիկայի յուրացման խանդավառութեամբ, պաթոսով, աշխատանքի արտադրողականութեան լուրջ բարձրացումով, ինքնարժեքի լուրջ կրճատումով:

Այդ է այժմ գլխավորը:

Վորովհետեւ միմիայն այդ բաղայի վրա կարող ենք մենք հասնել այն բանին, վոր, ասենք, յերկրորդ հնդամյակի յերկրորդ կեսում նոր հզոր թափ առնենք թե՛ շինարարութեան բնագավառում և թե՛ արդյունաբերական արտադրանքի աճի բնագավառում:

Վերջապէս, մի քանի խոսք արտադրանքի տարեկան աճի բուն տեմպերի ու տոկոսների մասին: Մեր արդյունաբերողները քիչ են զբաղվում այդ հարցով: Մինչդեռ այդ շատ հետաքրքրական հարց է: Ի՞նչ են արտադրանքի աճի տոկոսները և իրապէս ի՞նչ

և թաղանթած աճի յուրաքանչյուր տոկոսի հետևը: Վերցնենք, որինակ, 1925 թվականը, վերականգնման ժամանակաշրջանը: Այն ժամանակ արտադրանքի տարեկան աճը 66% էր: Արդյունաբերության համախառն արտադրանքը կազմում էր 7.700 միլիոն ռուբլի: Այն ժամանակ 66% աճը բացարձակ թվերով կազմում էր 3 միլիարդից ավելի: Հետևաբար, աճի յուրաքանչյուր տոկոսը այն ժամանակ հավասար էր 45 միլիոն ռուբլու: Հիմա վերցնենք 1928 թվականը: Նա ավելց աճի 26%, այսինքն՝ տոկոսային հարաբերությամբ համարյա յերեք անգամ պակաս, քան 1925 թվականը: Արդյունաբերության համախառն արտադրանքն այն ժամանակ կազմում էր 15.500 միլիոն ռուբլի: Ամբողջ տարեկան աճը բացարձակ թվերով կազմեց 3.280 միլիոն ռուբլի: Հետևաբար, աճի յուրաքանչյուր տոկոսն այն ժամանակ հավասար էր 126 միլիոն ռուբլու, այսինքն՝ կազմում էր համարյա յեռասպառիկ ավելի մեծ դոմար, քան 1925 թ., յերբ մենք ունեյինք աճի 66%: Վերցնենք, վերջապես, 1931 թվականը: Նա ավելց աճի 22%, այսինքն՝ յերեք անգամ ավելի պակաս, քան 1925 թվականին: Արդյունաբերության համախառն արտադրանքն այն ժամանակ կազմում էր 30.800 միլիոն ռուբլի: Ամբողջ աճը բացարձակ թվերով 5.600 միլիոն ռուբլուց ավելի չեղավ: Հետևաբար, աճի յուրաքանչյուր տոկոսը կազմեց ավելի քան 250 միլիոն ռուբլի, այսինքն՝ վեց անգամ ավելի, քան 1925 թվականին, յերբ մենք ունեյինք աճի 66%, և կրկնապատիկ ավելի, քան 1928 թվականին, յերբ մենք ունեյինք աճի ավելի քան 26%:

Ի՞նչ է ասում այս ամենը: Այն, վոր արտադրանքի աճի տեմպերն ուսումնասիրելիս չի կարելի սահմանափակվել աճի տոկոսների միմիայն ընդհանուր դոմարի քննարկմամբ, — պետք է դիտենալ նաև, թե ինչ է թաղանթած աճի յուրաքանչյուր տոկոսի հետևը, և վորն է արտադրանքի տարեկան աճի ընդհանուր դոմարը: Մենք, որինակ, 1933 թվականի համար վերցնում ենք աճի 16%, այսինքն՝ չորս անգամ ավելի պակաս, քան 1925 թվականին: Բայց այդ դեռ չի նշանակում, թե այդ տարվա արտադրանքի աճը նույնպես չորս անգամ ավելի պակաս կլինի: Արտադրանքի աճը 1925 թվականին բացարձակ թվերով 3 միլիարդ ռուբլուց ավելի կազմեց, իսկ յուրաքանչյուր տոկոսը հավասար էր 45 միլիոն ռուբլու: Տարակուսելու հիմք չկա, վոր 1933 թվին արտադրանքի աճը բացարձակ թվերով, աճի նորման ընդունե-

չով 16% , կկազմի վոչ պակաս քան 5 միլիարդ ուրբլի , այսինքն՝ համարյա կրկնապատիկ ավելի , քան 1925 թվականին . իսկ աճի յուրաքանչյուր տոկոսը հավասար կլինի առնվաղն 320—340 միլիոն ուրբլու , այսինքն՝ առնվաղն յոթն անգամ ավելի մեծ գումար կկազմի , քան 1925 թվականի աճի յուրաքանչյուր տոկոսը :

Ահա թե ինչ կերպարանք է ստանում գործն , ընկերներ , յեթե կոնկրետորեն քննենք աճի տեմպերի ու տոկոսների հարցը :

Այսպես է չորս տարում կատարված հնգամյակի հանրագումարների բանն արդյունարերության բնագավառում :

ՉՈՐՍ ՏԱՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Անցնենք չորս տարում կատարված հնդամյակի հանրադու-
մարներին դյուղատնտեսության բնադավառում :

Հնդամյակը դյուղատնտեսության բնադավառում՝ կոլեկտի-
վացման հնդամյակ է : Ինչի՞ց եր յեղնում կուսակցությունը՝ անց-
կացնելով կոլեկտիվացումը :

Կուսակցությունը յեղնում եր այն բանից, վոր պրոլետարիա-
տի դիկտատուրան ամրացնելու և սոցիալիստական հասարակու-
թյուն կառուցելու համար, բացի ինդուստրացումից, անհրա-
ժեշտ է նաև անցումն մանր անհատական դյուղացիական տնտե-
սությունից դեպի տրակտորներով ու ժամանակակից դյուղատըն-
տեսական մեքենաներով ոժտված խոշոր կոլեկտիվ դյուղատըն-
տեսություն, վորպես խորհրդային իշխանության միակ հաստա-
տուն հիմքը դյուղում :

Կուսակցությունը յեղնում եր այն բանից, վոր առանց կոլեկ-
տիվացման անհնարին է մեր յերկիրը դուրս բերել սոցիալիզմի
տնտեսական ֆունդամենտը կառուցելու լայն ճանապարհը, ան-
հնարին է բազմամիլիոն աշխատավոր դյուղացիությունն աղա-
տել աղքատությունից և տգիտությունից :

Լենինն ասում եր, վոր

«Մանր տնտեսությամբ կարիքից դուրս չես պրծնի»
(տե՛ս Հ. XXIV, էջ 540) :

Լենինն ասում եր, վոր

«Տեթե մենք, առաջվա նման, նստած մնանք ժամր տըն-

առաջնությունների մեջ, թեկուզ իբրև աղատ քաղաքացիներ աղատ հողի վրա, միևնույն է՝ մեզ անխուսափելի կործանում է սպառնում» (տե՛ս հ. XX, էջ 417) :

Լենինն ասում էր, վոր

«Միմիայն ընդհանուր, արտելային, բնկերային աշխատանքի ողնությամբ կարելի չե դուրս գալ այն փափուկուղ, վորի մեջ քշել է մեզ իմպերիալիստական պատերազմը» (տե՛ս հ. XXIV, էջ 537) :

Լենինն ասում էր, վոր

«Անհրաժեշտ է անցնել հողի ընդհանուր մշակության՝ որինակելի խոշոր տնտեսություններում. առանց դրան չի կարելի դուրս գալ այն փուլովմից, այն ուղղակի հուսադատական դրությունից, վորի մեջ գտնվում է Ռուսաստանը» (տե՛ս հ. XX, էջ 418) :

Յեղնելով դրանից՝ Լենինը յեկավ հետևյալ հիմնական յեզրակացությունը.

«Միմիայն այն դեպքում, յեթե հաջողվի դործով ցույց տալ գյուղացիներին հողի հանրային, կոլեկտիվ, բնկերային, արտելային մշակման առավելությունները, միմիայն յեթե հաջողվի ողնել գյուղացուն բնկերային, արտելային տնտեսությունից միջոցով, այն ժամանակ միայն բանվոր դասակարգը, վոր իր ձեռքումն է պահում պետական իշխանությունը, իրոք կապացուցի գյուղացուն իր իրավացիությունը, իրոք հաստատուն կերպով և ինչպես հարկն է իր կողմը կգրավի բաղմամբիտոն գյուղացիական մասսային» (տե՛ս հ. XXIV, էջ 579—580) :

Լենինի այս դրույթներից էր յեղնում կուսակցությունը՝ կրթառելով գյուղատնտեսության կոլեկտիվացման ծրագիրը, հընդամյակի ծրագիրը գյուղատնտեսության բնադավառում :

Այդ կապակցությամբ հնգամյակի խնդիրը գյուղատնտեսության վերաբերմամբ այն էր, վոր տրակտորներ ու ժամանակակից գյուղատնտեսական մեքենաներ ոգտագործելու հնարավորությունից դուրկ ցիրուցան ու մանր անհատական գյուղացիական տնտեսությունները միավորի բարձր զարգացած գյուղատնտեսության բոլոր ժամանակակից դործիքներով սպառազինված խոշոր կոլեկտիվ տնտեսությունների մեջ, իսկ աղատ հողերը ծածկի որինակելի պետական տնտեսություններով, խորհրդային տնտեսություններով :

Գյուղատնտեսության հնգամյակի խնդիրն այն էր, վոր

ԽՍՀՄ-ին մանր-դյուղացիական և հետամնաց յերկրից խոշոր դյուղատնտեսության յերկրի փոխարկի, մի դյուղատնտեսության, վորը կաղմակերպված է կոլեկտիվ աշխատանքի հիմունքով և առավելագույն ապրանքայնություն է տալիս:

Ի՞նչ արդյունքի հասավ կուսակցությունը, իրադործելով չորս տարում կատարելիք հնդամյակի ծրագիրը դյուղատնտեսության բնագավառում: Իրադործե՞ց արդյոք նա այդ ծրագիրը, թե՞ կրակի յենթարկվեց:

Կուսակցությունը հասավ այն բանին, վոր մի յերեք տարվա ընթացքում կարողացավ կաղմակերպել ավելի քան 200 հազար կոլեկտիվ տնտեսություններ և մոտ 5 հազար հացահատիկային ու անասնաբուծական ուղղություն ունեցող խորհրդատեսություններ, միաժամանակ 4 տարվա ընթացքում 21 միլիոն հեկտարով ընդարձակելով ցանքային տարածությունները:

Կուսակցությունը հասավ այն բանին, վոր կոլտնտեսությունները ներկայումս միավորում են դյուղացիական տնտեսությունների 60%-ից ավելին, ընդգրկելով բոլոր դյուղացիական հողամասերի 70%-ից ավելին, վոր նշանակում է հնդամյակի յեռապատիկ գերակատարում:

Կուսակցությունը հասավ այն բանին, վոր անհատական դյուղացիական տնտեսության դերակշռության ժամանակաշրջանում միջերկր 500—600 միլիոն փութ ապրանքային հացահատիկի փոխարեն՝ ներկայումս հնարավորություն ունի միջերկր տարեկան 1200—1400 միլիոն փութ հացահատիկ:

Կուսակցությունը հասավ այն բանին, վոր կուլակությունը վորպես դասակարգ ջախջախված է, թեև դեռ չի վճռահայտված, աշխատավոր դյուղացիությունն աղատադրված է կուլակային ստրկացումից ու շահագործումից, և դյուղում ամուր տնտեսական բաղա, կոլեկտիվ տնտեսության բաղա յե ստեղծված խորհրդային իշխանության համար:

Կուսակցությունը հասավ այն բանին, վոր ԽՍՀՄ-ն մանր-դյուղացիական տնտեսության յերկրից արդեն փոխակերպվել և աշխարհիս ամենախոշոր դյուղատնտեսության յերկրի:

Ընդհանուր առմամբ սրանք են չորս տարում կատարված հնդամյակի հանրագումարները դյուղատնտեսության բնագավառում:

Այժմ ինքներդ դատեցեք. ի՞նչ արժեք ունի այս ամենից հետո բուրժուական մամուլի չաղակրատությունը կոլեկտիվացման

«կրախի», հնդամյակի տապալման մասին գյուղատնտեսության բնադավառում:

Իսկ ի՞նչ դրության մեջ է գյուղատնտեսությունը կապիտալիստական յերկիրներում, վորոնք ներկայումս գյուղատնտեսական դաժան ճղնաժամ են ապրում:

Ահա բոլորին հայտնի պաշտոնական տվյալները.

Հացահատիկ արտադրող հիմնական յերկիրներում ցանքային տարածությունները կրճատված են 8—10%-ով: Բամբակի ցանքերի տարածությունները ՀԱՄՆ-ում կրճատված են 15%-ով, չաքաբի ձախդեղինը՝ Գերմանիայում ու Չեխո-Սլովակիայում—22—30%-ով, վուշինը՝ Լիտվայում և Լատվիայում—25—30 տոկոսով:

Ամերիկական գյուղատնտեսական դեպարտամենտի տվյալներով՝ ՀԱՄՆ-ի գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքը 1929 թվի 11 միլիարդ դոլլարից՝ 1932 թվին իջել է 5 միլիարդի, այսինքն՝ ավելի քան 50%-ով: Նույն տեղում հացահատիկի համախառն արտադրանքի արժեքը 1929 թվի 1288 միլիոն դոլլարից՝ 1932 թվին իջել է 391 միլիոն դոլլարի, այսինքն՝ ավելի քան 68%-ով: Բամբակինը նույն տեղում 1929 թվի 1389 միլիոն դոլլարից՝ 1932 թվին իջել է 397 միլիոն դոլլարի, այսինքն իջել է ավելի քան 70%-ով:

Չե՞ն խոսում արդյոք այս բոլոր փաստերը գյուղատնտեսության խորհրդային սխտեմի առավելությունների մասին՝ կապիտալիստական սխտեմի հանդեպ: Չե՞ն խոսում արդյոք այս փաստերն այն մասին, վոր կորսնտեսությունները տնտեսության ավելի կենսունակ ձև են, քան միանձնյա ու կապիտալիստական տընտեսությունները:

Ասում են, թե կորսնտեսություններն ու խորհանտեսությունները լիովին ել չաճարեր չեն, թե նրանք ահադին միջոցներ են կլանում, թե այդպիսի ձեռնարկություններ պահելը վոչ մի իմաստ չունի, թե ավելի նպատակահարմար կլիներ ցրել այդ ձեռնարկությունները, թողնելով նրանցից չահավետները միայն: Բայց այդպես կարող են խոսել միմիայն այն մարդիկ, վորոնք վոչինչ չեն հասկանում ժողովրդական տնտեսության հարցերում, եկոնոմիկայի հարցերում: Միքանի տարի առաջ տեքստիլ ձեռնարկությունների կեսից ավելին անչահարեր եր: Մեր ընկերների մի մասն այն ժամանակ առաջարկում էր փակել այդ ձեռնարկությունները: Ի՞նչ կլիներ մեր բանը, յեթե մենք լսած լինեյինք նրանց: Մենք մեծապույն վոճրագործությունը կատարած կլինե-

յինք չեք բերի հանդես, բանվոր դասակարգի հանդես, փոքրվհետև դրանով մենք կքայքայեյինք մեր բարձրացող արդյունաբերությունը: Իսկ ի՞նչպես վարվեցինք մենք այն ժամանակ: Մենք մի տարուց ավելի սպասեցինք և հասանք այն բանին, վոր ամբողջ տեքստիլ արդյունաբերությունը չահաբեր դարձավ: Իսկ մեր ավտոգործարանը Գորկի քաղաքում: Չե՞ վոր նա ել առայժմ անչահաբեր է: Արդյոք չե՞ հրամայի փակել այն: Կամ մեր սև մետաղագործությունը, վորը նույնպես առայժմ անչահաբեր է: Չփակե՞նք արդյոք այն, ընկերներ: Յեթե այդպես նայե՞ք չահաբերությանը, այն ժամանակ մենք պետք է ըստ ամենայնի դարդացնենք արդյունաբերության միմիայն միջանի ճյուղերը, վորոնք ամենից ավելի ռենտա յեն բերում, որինակ՝ հրուշակային արդյունաբերությունը, ավրաղաց արդյունաբերությունը, պարֆյումերիայի, տրիկոտաժի արդյունաբերությունը, ֆանկական խաղալիքների արդյունաբերությունը և այլն: Յես, իհարկե, դեմ չեմ արդյունաբերության այդ ճյուղերի դարդացմանը: Ընդհակառակը, նրանք պետք է զարգացվեն, վորովհետև նրանք նույնպես հարկավոր են բնակչությանը: Բայց նախ, նրանք չեն կարող զարգացվել առանց քարքավորման ու վառելիքի, վոր նրանց տալիս է ծանր ինդուստրիան: Յերկրորդ, նրանց վրա չի կարելի հիմնել ինդուստրացումը: Ահա թե ինչն է բանը, ընկերներ:

Շահաբերության վրա չի կարելի նայել չարչիարար, ավյալ բուսեյի տեսակետից: Շահաբերությունը պետք է վերցնել համաժողովրդական տնտեսության տեսակետից, միջանի տարվա տրամատով: Միմիայն այդպիսի տեսակետը կարող է իրոք լենինյան, իրոք մարքսիստական կոչվել: Յեւ այդ տեսակետը պարտադիր է վո՞չ միայն արդյունաբերության նկատմամբ, այլև ե՛լ ավելի մեծ չափով կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների նկատմամբ: Մտածեցե՛ք միայն. մի յերեք տարվա ընթացքում մենք ստեղծել ենք 200 հազարից ավելի կոլտնտեսություն և մոտ 5 հազար խորհտնտեսություն, այսինքն՝ մենք ստեղծել ենք բոլորովին նոր խոշոր ձեռնարկություններ, վորոնք նույնպիսի նշանակություն ունեն դյուղատնտեսության համար, ինչպես դործարաններն ու ֆաբրիկաները՝ արդյունաբերության համար: Մի յերկրի անուն տվեք, վորը կարողացած լինի յերեք տարվա ընթացքում ստեղծել վոչ թե 205 հազար նոր խոշոր ձեռնարկություններ, այլ թեկուզ 25 հազար այդպիսի ձեռնարկություններ: Դուք չեք կա-

ըող աջգլխի անուն տալ, վորովհետեւ աջգլխի յերկիր չկա և չի յեղել: Իսկ մենք ստեղծել ենք 205 հազար նոր ձեռնարկություններ դուղատնտեսության մեջ: Յեւ ահա, բանից դուրս ե գալիս՝ աշխարհում մարդիկ կան, վորոնք պահանջում են, վոր այդ ձեռնարկությունները միանգամից շահարեր դառնան, իսկ յեթե նրանք միանգամից շահարեր չդառնան, ապա քանդել ու ցրել տալ գրանք: Պարզ չե՞ արդե՞ք, վոր Հերոստրատի դափնիները փախցրել են այդ ավելի քան տարրինակ մարդկանց ջունք:

Խոսելով կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների անշահարերության մասին՝ յես ամենևին չեմ ուզում ասել, թե նրանք բոլորն ել անշահարեր են: Բոլորովին վոչ: Ամենքին հայտնի յե, վոր ներկայումս արդեն կան մի ամբողջ շարք վերին աստիճանի շահարեր կոլտնտեսություններ ու խորհտնտեսություններ: Մենք ունենք հազարավոր կոլտնտեսություններ ու տասնյակներով խորհտնտեսություններ, վորոնք այժմ արդեն միանգամայն շահարեր են: Այդ կոլտնտեսություններն ու խորհտնտեսությունները մեր կուսակցության պարծանքն են, խորհրդային իշխանության պարծանքը: Կոլտնտեսություններն ու խորհտնտեսությունները, իհարկե, ամեն տեղ ել միատեսակ չեն: Կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների մեջ կան հները, նորերը և բոլորովին յերիտասարդները: Դրանք դեռ թույլ, դեռ լիովին չկադապարված տնտեսական որգանիղմներ են: Դրանք իրենց կազմակերպական շինարարության մեջ ապրում են մոտավորապես նույն այն ժամանակաշրջանը, վոր ապրում ելին մեր դործարաններն ու ֆաբրիկաները 1920—1921 թվականներին: Հասկանալի յե, վոր նրանց մեծամասնությունը դեռ չի կարող շահարեր լինել: Բայց վոր նրանք շահարեր կդառնան 2—3 տարվա ընթացքում, այնպես, ինչպես շահարեր դարձան մեր դործարաններն ու ֆաբրիկաները 1921 թվից հետո, — դրանում վոչ մի տարակույս չի կարող լինել: Մերժել նրանց ողնություն ու աջակցություն ցույց տալ այն հիմունքով, թե նրանք վոչ բոլորն են շահարեր տվյալ բոլակին, — նշանակում ե մեծագույն վոճիրը գործել բանվոր դասակարգի ու դուղացիության հանդեպ: Միմիայն ժողովրդի թշնամիները և հակահեղափոխականները կարող են հարց դնել կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների պեսդ չլինելու մասին:

Կենսագործելով հնգամյակը դուղատնտեսության վերաբերմամբ՝ կուսակցությունն արադացված տեմպերով եր իրականաց-

նում կոլեկտիվացումը: Ճի՞շտ եր վարվում արդյոք կոնսակցութ-
յունը՝ կիրառելով կոլեկտիվացման արադացված տեմպերի քա-
ղաքականութուն: Այո՛, անսպաժան ճիշտ, թեև այստեղ դործն
առանց վորոշ չափադանցությունների չվերջացավ: Կիրառելով
կուլակուլութունը վորպես դասակարգ վերացնելու քաղաքականու-
թյունը և արմատահան անելով կուլակային բները՝ կոնսակցու-
թյունը չեւ կարող կես ճանապարհին կանգ առնել, —նա պետք է
այդ դործը մինչև վերջը հասցնէր:

Այս — առաջին:

Յերկրորդ, ունենալով, մի կողմից, արակտորներ ու դյու-
զատնտեսական մեքենաներ և, մյուս կողմից, ոգովելով հողի
մասնավոր սեփականության բացակայությունից (հողի ազդայ-
նացումը)՝ կոնսակցությունը բոլոր հնարավորություններն ու-
ներ արադացնելու դյուզատնտեսության կոլեկտիվացումը: Յեւ նա
իրոք այս բնադավառում մեծադույն հաջողություն ձեռք բերեց,
վորովհետեւ յեռապատիկ գերակատարեց կոլեկտիվացման հնգա-
մյակի ծրագիրը:

Նշանակում է այդ արդյոք, վոր մենք պետք է կոլեկտիվացման
արադացրած տեմպերի քաղաքականություն վարենք նաեւ յերկ-
րորդ հնգամյակի ժամանակաշրջանում: Վո՛չ, չի նշանակում:
Բանն այն է, վոր մենք հիմնականում արդեն ավարտել ենք ԽՍՀ
Միության հիմնական շրջանների կոլեկտիվացումը: Հետեւաբար,
ավելին ենք կատարել այդ բնադավառում, քան կարելի յեր սպա-
սել: Յեւ հիմնականում չե թե միայն ավարտել ենք կոլեկտիվա-
ցումը: Մենք հասել ենք այն բանին, վոր դյուզացիության հըս-
կայական մեծամասնության գլխակցության մեջ կոլտնտեսու-
թյունները դարձել են տնտեսության ամենից ավելի ընդունելի
ձեւը: Այդ ահադին նվաճում է, ընկերներ: Սրանից հետո արժե՞
արդյոք գլխապատառ դես ու դեն ընկնել կոլեկտիվացման արադ
տեմպերի վերաբերմամբ: Պարզ է, վոր հարժե:

Հիմա հարցը կոլեկտիվացման արադացրած տեմպերի մասին
չե արդեն և ավելի ևս այն մասին չե՝ լինեն՞ արդյոք կոլտնտե-
սությունները, թե չլինեն. այդ հարցն արդեն լուծված է դրական
իմաստով: Կոլտնտեսություններն ամբապնդված են, և ուզին
դեպի հին, միանձնյա տնտեսությունը փախված է վերջնականա-
պես: Հիմա խնդիրն այն է, վորպեսզի ամբացնենք կոլտնտեսու-
թյունները կազմակերպորեն, դուրս չարտենք այնտեղից վնասա-
բարական տաքբերին, ընտրենք իսկական, ստուգված բուլլետիյան

կաղերեր կոլտնտեսութիւնների համար և կոլտնտեսութիւններն
իրոք բոլշեիկյան դարձնենք :

Այդ և հիմա գլխաւորը :

Այսպէս և չորս տարում կատարւած հնգամյակի բանը գյու-
ղատնտեսութեան բնագաւառում :

ԶՈՐՍ ՏԱՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՀԱՆՐԱ- ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՈՒ ԳՅՈՒՂԱՑԻՆԵ- ՐԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Յեւ վերը խոսեցի արդյունաբերութեան ու գյուղատնտեսու-
թեան բնագավառում ունեցած հաջողութիւնների մասին, արդյու-
նաբերութեան ու գյուղատնտեսութեան վերելքի մասին ԽՍՀՄ-
ում: Խոչ արդյունքներ ունեցան այդ հաջողութիւնները բան-
վորների ու գյուղացիների նյութական դրութեան բարելավման
տեսակետից: Վերոհիշեցնում եմ արդյունաբերութեան ու գյուղատնտե-
սութեան բնագավառում մեր ունեցած հաջողութիւնների հիմնա-
կան արդյունքները՝ աշխատավորների նյութական դրութեան ար-
մատական բարելավման տեսակետից:

Արդյունքները, նախ և առաջ, այն են, վոր վոչնչացված ե
գործազրկութեանը, և բանվորների մեջ վերացված ե անվտանգու-
թեանը վաղվա որվա նկատմամբ:

Յերկրորդ, դրանք այն են, վոր համարյա ամբողջ գյուղա-
ցիական չբավորութեանը ընդգրկված ե կոտնտեսային շինարա-
բութեան մեջ, այս հիմքի վրա խարխիված ե գյուղացիութեան
չբտավորումը կուլակների ու չբավորների, և այդ կապակցու-
թեամբ գյուղում վոչնչացված ե աղքատացումն ու պառւպերիզմը:

Այս ահադին նվաճումն ե, ընկերներ, վորի մասին վոչ մի
բուրժուական պետութեան յերազել չի կարող, թեկուզ հենց նա
լինի ամենից ավելի «գեմոկրատական» պետութեանը:

Մեզ մոտ, ԽՍՀՄ-ում, բանվորները վաղուց արդեն մոռացել
են գործադրկութեանը: Մի յերեք տարի առաջ մենք ունեյինք մոտ

մեկուկէս միլիոն դործադուրի: Ահա յերկու տարի յէ, վոք մենք վոչնչացրել ենք դործադրկությունը: Յեւլ բանվորներն այդ ժամանակվա ընթացքում արդեն կարողացել են մոռանալ դործադրկության մասին, նրա ճնշման, նրա սարսափների մասին: Հասա մի նայեցե՛ք կապիտալիստական յերկիրներին, ի՛նչ ռաբստփելի բաներ են կատարվում այնտեղ դործադրկության հոգի վրա: Այդ յերկիրներում ներկայումս կան 30—40 միլիոնից վոչ պակաս դործադուրկներ: Ի՞նչ մարդիկ են դրանք: Նրանց մասին ռաբստփար ասում են, թե նրանք «կորած մարդիկ են»:

Նրանք ամեն ոք ձգտում են աշխատանք գտնել, աշխատանք են վորոնում, նրանք պատրաստ են ընդունելու աշխատանքի համարյա ամեն պայման, բայց նրանց աշխատանքի չեն ընդունում, վորովհետեւ նրանք «ավելորդ» մարդիկ են: Յեւլ այս այն ժամանակ, յերբ ապրանքների ու մթերքների ահադին մասսաներ վատնւում են կապիտալիստների ու կալվածատերերի՝ բախտից վայփայված դավակների քմահաճույքների համար: Գործադուրկներին մերժում են ուտելիք տալ, վորովհետեւ նրանք վոչինչ չունեն վճարելու ուտելիքի համար. նրանց ոթեան չեն տալիս, վորովհետեւ նրանք վոչինչ չունեն վճարելու բնակարանի համար: Ինչո՞վ և վորքանեղ են ապրում նրանք: Նրանք ապրում են աղանքի սեղանի խղճով փշրանքներով, պեղումներ կատարելով աղբի արկըղներում, վորտեղ նրանք ուտելիքի նեխված մնացորդներ են գտնում, ապրում են մեծ քաղաքների հետ ընկած մասերում, իսկ ամենից ավելի՝ քաղաքից դուրս, դործադուրկների ձեռքով արկըղների տախտակներից ու ծառերի կեղևից չտապ շինված հյուղերում: Բայց սա ամենը չէ: Գործադրկությունից տառապում են վոչ միայն դործադուրկները: Նրանից տառապում են նաեւ դործունեցող բանվորները: Տառապում են, վորովհետեւ մեծ քանուկությամբ դործադուրկների առկայությունն անկայուն դրություն է ստեղծում նրանց համար արտադրության մեջ, անվտանգություն դեպի վաղվան որը: Այսոր նրանք աշխատում են ձեռնարկության մեջ, բայց նրանք համոզված չեն, թե վաղն արթնանալով՝ չեն իմանա, վոր իրենց արդեն արձակել են:

Չորս տարում կատարված հնդամյակի հիմնական նվաճումներից մեկն այն է, վոր մենք վոչնչացրինք դործադրկությունը և ՅՄՀՄ-ի բանվորներին աղատեցինք նրա սաբսափներից:

Հենց այդ նույնը պետք է առել նաեւ դյուղացիների մասին: Նրանք նույնպես մոռացան դյուղացիության՝ կուլակների ու չքավորների շերտավորվելու մասին, կուլակների կողմից ճշտվո-

բության շահադործակելու մասին, այն տնտեսական քայքայման մասին, վոր ամեն տարի հարյուր հարյուրավոր ու միլիոնավոր չքավորների մուրացկան եր դարձնում: Մի յերեք-չորս տարի սրանից առաջ գյուղացիների մեջ մեր ամբողջ գյուղացիական բնակչության առնվազն 30%-ը չքավոր եր: Այդ ավելի քան տասնյակ միլիոնավոր մարդ եր անում: Իսկ ավելի առաջ, մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը, չքավորները կազմում էին գյուղացիական բնակչության վոչ սրակաս քան 60%-ը: Ի՞նչ են չքավորները: Դրանք այնպիսի մարդիկ են, վորոնց տնտեսության համար սովորաբար սրահասում էին կամ սերմացուն, կամ ձին, կամ գործիքները, կամ թե սրահասում էին այդ բոլոր բաները միասին վերցրած: Չքավորներն այնպիսի մարդիկ են, վորոնք կիսաքաղց էին ապրում և, վորպես կանոն, կուլակների ստրկության մեջ էին, իսկ հին ժամանակները՝ թե՛ կուլակների և թե՛ կալվածատերերի ստրկության մեջ: Դեռ բոլորովին վերջերս մոտ մեկուկես միլիոն, իսկ յերեմհն նույնիսկ ամբողջ յերկու միլիոն չքավորներ յուրաքանչյուր տարի ուղևորվում էին հարավ—Հյուսիսային Կովկաս ու Ուկրաինա—աշխատանք գտնելու՝ իրրե կուլակների, իսկ ե՛լ ավելի առաջ—իրրե կուլակների ու կալվածատերերի վարձավորներ: Ե՛լ ավելի մեծ քանակությամբ այդպիսի չքավոր գյուղացիներ յուրաքանչյուր տարի ընկնում էին գործարանների դռները, լցնելով գործադուրկների շարքերը: Յեվ մի—միայն չքավորները չէին, վոր այդպիսի անախատնձևի դրության մեջ էին: Միջակներն ուղիղ կեսն ել գտնվում եր նույնպիսի կարիքի ու զրկանքների մեջ, ինչպես չքավորները: Այդ ամենի մասին գյուղացիներն արդեն մոռացել—սրժել են:

Ի՞նչ ավեց չորս տարում կատարված հեղափոխիչ չքավորներին ու միջակների ստորին խավերին: Նա խարխիկաց ու ջախջախեց կուլակությունը վորպես դասակարգ՝ աղատադրելով չքավորներին ու միջակների ուղիղ կեսը կուլակային ստրկացումից: Նա նրանց ներգրավեց կոլտնտեսությունները և նրանց համար հաստատուն դրություն ստեղծեց: Նա դրանով իսկ վոչնչացրեց գյուղացիության շերտավորվելու, այն ե՛ վորպես շահագործողների—կուլակների ու շահագործվողների—չքավորների շերտավորվելու հնարավորությունը: Նա կոլտնտեսություններում յեղած չքավորությանը և միջակների ստորին խավերին հասցրեց ապահովված մարդկանց դրության, դրանով վոչնչացնելով գյուղացիության տնտեսական քայքայման ու աղքատացման պրոցեսը: Այժմ մեղադրում արդեն չկան այնպիսի դեպքեր, վոր ամեն տարի մի—

լիոնավոր դյուղացիներ պոկվին իրենց տեղից և դատումի դեման հեռավոր յերկիրներ: Ներկայումս, վորպեսզի դյուղացուն իր ահաբալան կոլտնտեսությունից դուրս վորևե տեղ աշխատանքի ուղարկենք, հարկավոր ե պայմանադիր կնքել կոլտնտեսության հետ և դեռ կոլտնտեսականի համար ապահովել նաև ձրի փոխադրությունը յերկաթուղով: Այժմ մեզանում արդեն չկան այնպիսի դեպքեր, վոր հարյուր հազարավոր ու միլիոնավոր դյուղացիներ տնտեսապես քայքայվեն և ֆարքիկանների ու գործարանների շեմքերը թաշեն: Այդ յեղել է, բայց վաղուց անցել է: Այժմ դյուղացին ապահովված տնտեսատեր է, կոլտնտեսության տնդամ, կոլտնտեսության, վորն իր տրամադրության տակ ունի տրակտորներ, դյուղատնտեսական մեքենաներ, սերմֆոնդեր, պահեստի ֆոնդեր և այլն և այլն:

Ահա թե ինչ տվեց հնդամյակը չքավորությանն ու մեջախնարի ստորին խավերին:

Ահա թե վորն և հնդամյակի հիմնական նվաճումների եյությունը՝ բանվորների ու դյուղացիների նյութական դրության բարելավման բնադավառում:

Բանվորների ու դյուղացիների նյութական դրության բարելավման բնադավառում ձեռք բերված այդ հիմնական նվաճումները հետևանքով՝ առաջին հնդամյակում մենք ունենք հետևյալը.

ա) խոշոր արդյունաբերության մեջ աշխատող բանվորների ու ծառայողների թվի կրկնակի աճում 1928 թվի համեմատությամբ, վորով հնդամյա սղանը գերակատարվել է 57%-ով:

բ) ժողովրդական յեկամտի աճում, — հետևաբար՝ բանվորների ու դյուղացիների յեկամուտների աճում, — վորը 1932 թվին հասել է 45,1 միլիարդ ուրբու, այսինքն՝ 1928 թվի համեմատությամբ ավելացել է 85%-ով:

գ) խոշոր արդյունաբերության մեջ աշխատող բանվորների ու ծառայողների տարեկան միջին աշխատավարձի աճում 1928 թվի համեմատությամբ 67%-ով, վորով հնդամյակը գերադասարված է 18%-ով:

դ) առյխալական ապահովագրության ֆոնդի աճում 1928 թվի համեմատությամբ 292%-ով (1932 թվին 4.120 միլիոն ուրբի՝ 1928 թվի 1050 միլիոն ուրբու գիմաց), վորով հնդամյա տղանը գերակատարված է 111%-ով:

ե) հանրային սննդի աճում՝ արդյունաբերության վճարական ճյուղերի բանվորների 70-ից ավելի տոկոսի բնդդրմամբ, վորով հնդամյակը գերակատարված է վեց անգամ:

Իհարկե, մենք դեռ չենք հասել այն բանին, վոր քիմիկն ապահովենք բանվորներին ու գյուղացիների նյութական օրհանջները: Յեւ հազիվ թե մենք այդ բանին հասնենք մերձավորագույն տարիներին ընթացքում: Բայց մենք անտարակույս հասել ենք այն բանին, վոր մեզանում տարեցտարի բարելավվում է բանվորների ու գյուղացիների նյութական դրությունը: Այս մասին կարող են կասկածել դուցե միմիայն խորհրդային իշխանության յերգվյալ թշնամիները, կամ դուցե բուրժուական մամուլի միջանի ներկայացուցիչները, դրանց թվում նաև այդ մամուլի Մոսկվայի թղթակիցների մի մասը, վորոնք ժողովուրդների եկոնոմիկայից և աշխատավորների դրությունից հասկանում են հազիվ թե ունենալի, քան, ասենք, Հարեչստանի թագավորը բարձրագույն մեթեմատիկայից:

Իսկ ի՞նչպես է բանվորներին ու գյուղացիներին դրությունը կապիտալիստական յերկիրներում:

Ահա պաշտոնական տվյալները:

Կատաստրոֆիկ կերպով աճել է դործազուրկների քանակությունը կապիտալիստական յերկիրներում: ՀԱՄՆ-ում, պաշտոնական տվյալներով, միմիայն մշակող արդյունաբերության մեջ աշխատող բանվորների թիվը 1928 թվականի 8,5 միլիոնից 1932 թվին իջել է 5,5 միլիոնի, իսկ Աշխատանքի ամերիկյան Ֆեդերացիայի տվյալներով՝ դործազուրկների թիվը ՀԱՄՆ-ում ամբողջ արդյունաբերության դժով 1932 թվականի վերջերքին հասնում էր 11 միլիոն մարդու: Անգլիայում դործազուրկների թիվը, պաշտոնական վիճակագրության տվյալներով, 1928 թվականի 1.290 հազարից 1932 թվականին աճել-դարձել է 2,8 միլիոն մարդ: Գերմանիայում, պաշտոնական տվյալներով, դործազուրկների թիվը 1928 թվականի 1.376 հազարից 1932 թվին աճել է մինչև 5,5 միլիոն: Նույնպիսի տատկեր է նկատվում բոլոր կապիտալիստական յերկիրներում, ըստվորում պաշտոնական վիճակագրությունը, վորպես կանոն, պակասեցնում է դործազուրկների մասին յեղած տվյալները, դործազուրկների, վորոնց թիվը կապիտալիստական յերկիրներում տատանվում է 35-ից մինչև 40 միլիոն մարդու միջև:

Միտեմատիկորեն կատարվում է բանվորների աշխատավարձի կրճատում: Պաշտոնական տվյալներով՝ ՀԱՄՆ-ում միջին ամսական աշխատավարձը 1928 թվականի մակարդակի համեմատությամբ կրճատվել է 35%-ով, Անգլիայում նույն ժամանակամիջոցում—15%-ով, իսկ Գերմանիայում—մինչև անգամ 50%-ով:

Աշխատանքի ամերիկյան Ֆեդերացիայի հաշվարկումներով՝ ամերիկյան բանվորների կրած կորուստներն աշխատավարձի յՉեցման հետևանքով 1930/31 թվին կազմել են ավելի քան 35 միլիոն դոլար :

Չգալի չափով կրճատվել են բանվորների ապահովագրության առանց այն ել աննշան ֆոնդերն Անգլիայում ու Գերմանիայում : ՀԱՄՆ-ում ու Ֆրանսիայում բոլորովին կամ գրեթե բոլորովին բացակայում է գործազուրկների ապահովագրության վորևե ձև, վորի հետևանքով վիթխարի չափով աճում է անառն բանվորների ու անապաստան յերեխաների թիվը, առանձնապես ՀԱՄՆ-ում :

Ավելի լատ չե գյուղացիական մասսաների գրությունը կապիտալիստական յերկիրներում, վորտեղ գյուղատնտեսական ճգնաժամը հիմքից խարխլում է գյուղացիական տնտեսությունը և միլիոնավոր տնտեսապես քայքայված գյուղացիների ու Ֆերմերների մուրացկան և դարձնում :

Սրանք են չորս տարում կատարված հնդամյակի հանրագումարները ԽՍՀՄ-ի աշխատավորների նյութական գրության բարելավման բնագավառում :

ԶՈՐԱ ՏԱՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՀԱՆՐԱ- ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՔԱՂԱՔԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԻ ՄԻՋԵՎ ՏԵՂԻ ՈՒՆԵՑՈՂ ԱՊՐԱՆՔԱՊՏՈՒՅՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Անցնենք այժմ չորս տարում կատարված հնդամյակի հան-
բաղումարների հարցին՝ քաղաքի ու գյուղի միջև տեղի ունեցող
ապրանքապտույտի աճման ընդարձակումը:

Արդյունաբերության ու գյուղատնտեսության արտադրանքի
վիժիտարի աճումը, ապրանքային ամօլցուկների աճումը ինչպես
արդյունաբերության, այնպես և գյուղատնտեսության մեջ, վեր-
ջապես, բանվորների ու գյուղացիների պահանջմունքների աճու-
մը, — այս ամենը չէր կարող չտանել և իրոք տարավ դեպի քա-
ղաքի ու գյուղի միջև տեղի ունեցող ապրանքապտույտի աշխու-
ժացում ու ընդարձակում:

Արտադրական զոդումը քաղաքի ու գյուղի միջև՝ զոդման
հիմնական ձևն է: Բայց լուկ միայն արտադրական զոդումը բա-
վական չէ: Այն պետք է լրացնել ապրանքային զոդումով, վոբ-
պետքի կտալը քաղաքի ու գյուղի միջև ամուր ու անխելի դա-
նա: Այդ բանին կարելի չէ հասնել միմիայն խորհրդային առևտու-
րը ծավալելու միջոցով: Սխալ կլինեք կարծել, թե կարելի չէ
խորհրդային առևտուրը ծավալել միմիայն մեկ կանալի, արինակ,
կառուցելուց ժամի միջոցով: Խորհրդային առևտրի ծավալման հա-
մար անհրաժեշտ է ոգտադործել բոլոր կանալները — թե՛ կառու-
քառիվ ցանցը, թե՛ պետական — առևտրային ցանցը և թե՛ կառու-
մանային առևտուրը:

Միևնի ընկերներ կարծում են, թե խորհրդային առևտրի է

մանավանդ. կոլտնտեսային առևտրի ծախալումը վերադարձ և դե-
պի նեպի առաջին ստադիան: Այդ բոլորովին սխալ և:

Խորհրդային առևտրի, այդ թվում կոլտնտեսային առևտրի,
և նեպի առաջին ստադիայի առևտրի միջև արմատական տարբե-
րություն կա:

Նեպի առաջին ստադիայում մենք թույլ ելինք տալիս կապի-
տալիզմի աշխուժացում, թույլ ելինք տալիս մասնավոր ապրանքա-
պտույտ, թույլ ելինք տալիս մասնավոր առևտրականների, կապի-
տալիստների, սպեկուլանտների «գործունեությունը»:

Այդ քիչ թե չատ ազատ առևտուր եր, սահմանափակված պե-
տության կարգավորող դերով միայն: Այն ժամանակ մասնավոր-
կապիտալիստական սեկտորը յերկրի ապրանքապտույտի մեջ բա-
վական խոշոր տեղ եր գրավում: Յես չեմ խոսում արդեն այն
մասին, վոր այն ժամանակ մենք չունեինք վո՛չ այնպիսի դա-
րացած արդյունաբերություն, ինչպես այժմ, վո՛չ ել կոլտնտե-
սություններ ու խորհանտեսություններ, վորոնք աշխատում են
պլանով և պետության տրամադրության տակ են դնում գյուղա-
տնտեսական միջերժներ ու քաղաքային ապրանքների հսկայական
ռեզերվներ:

Կարելի՞ չե արդյոք ասել, թե մենք ներկայումս նույնպիսի
գրություն ունենք: Իհարկե, այդ ասել չի կարելի:

Նախ՝ չի կարելի խորհրդային առևտուրը մի մակարդակի
վրա դնել նեպի առաջին ստադիայի առևտրի հետ, թեկուզ և
պետության կողմից կարգավորվող առևտրի: Յեթե նեպի առա-
ջին ստադիայի առևտուրը թույլ եր տալիս կապիտալիզմի աշ-
խուժացում և մասնավոր-կապիտալիստական սեկտորի գործու-
նեյությունն ապրանքապտույտի մեջ, ապա խորհրդային առև-
տուրը յերևում և թե՛ մեկի և թե՛ մյուսի ժխտումից: Ի՞նչ բան և
խորհրդային առևտուրը: Խորհրդային առևտուրն առևտուր և
առանց փոքր ու մեծ կապիտալիստների, առևտուր՝ առանց փոքր
ու մեծ սպեկուլանտների: Այդ առանձին տեսակի մի առևտուր և,
վորը մինչև հիմա չի յեղել պատմության մեջ և վորը կառա-
րում ենք միմիայն մենք, բոլեկիկներս, խորհրդային դարգացման
պայմաններում:

Յերկրորդ, մենք հիմա ունենք բավական զարգացած պետա-
կան արդյունաբերություն և կոլտնտեսությունների ու խորհուր-
տեսությունների մի ամբողջ սիստեմ, վորոնք պետության հա-
մար ապահովում են գյուղատնտեսական ու արդյունաբերական
ապրանքների ահագին ռեզերվներ՝ խորհրդային առևտուրը ծա-

վալելու համար: Այդ չկար և չէր կարող լինել նեպի առաջին ստադիայի պայմաններում:

Յերբորդ, մենք հասանք այն բանին, վոր վերջին ժամանակաշրջանում ապրանքատուլյայից բոլորովին դուրս շարանցինք մասնավոր առևտրականներին, վաճառականներին, ամեն տեսակ միջնորդներին: Իհարկե, այդ չի բացառում այն, վոր ապրանքատուլյայի մեջ, առավելով որենքով, կարող են նորից յերևան դալ մասնավոր առևտրականներ ու սպեկուլանտներ, ոգտադործելով այդ նպատակով իրենց համար ամենից ավելի հարմար ապարեղը, այն ե՝ կոլտնտեսային առևտուրը: Դեռ ավելին. կոլտնտեսականներն իրենք դեմ չեն յերբեմն սպեկուլացիայի դիմելուն, վոր, իհարկե, պատիվ չի բերում նրանց: Բայց այդ վատառողջ յերևույթներն դեմ մենք ունենք սպեկուլացիան կասեցնելու և սպեկուլանտներին պատժելու միջոցառումների մասին այն որենքը, վոր խորհրդային իշխանությունը հրատարակել է վերջերս: Դուք դիտեք, իհարկե, վոր այդ որենքն առանձին մեղմությամբ չի տառապում: Դուք կհասկանաք, իհարկե, վոր այդպիսի որենք չի յեղել և չեր ել կարող լինել նեպի առաջին ստադիայի պայմաններում:

Դուք տեսնում եք, վոր այս ամենից հետո խոսել նեպի առաջին ստադիայի առևտրին վերադառնալու մասին՝ նշանակում է վռչինչ, ուղղակի վռչինչ չհասկանալ մեր խորհրդային եկոնոմիկայից:

Մեզ ասում են, թե հնարավոր չե ծավալել առևտուրը, յեթե այն նույնիսկ խորհրդային առևտուր և, առանց դրամական առողջ տնտեսության և առողջ վալյուտայի, թե ամենից առաջ հարկավոր է բուժել դրամական տնտեսությունը և մեր խորհրդային վալյուտան, վորն իբր թե վոչ մի արժեք չի ներկայացնում: Այդպես են ասում մեզ կապիտալիստական յերկիրների տնտեսագետները: Յեռ կարծում եմ, վոր այդ հարգելի տնտեսագետները քաղաքատնտեսությունից ավելի բան չեն հասկանում, քան, ասենք, Քենտրերերի արքեպիսկոպոսը հակաիրոնական պրոպագանդայից: Ի՞նչպես կարելի յե պնդել, թե մեր խորհրդային վալյուտան վոչ մի արժեք չի ներկայացնում: Մի՞թե սա փաստ չե, վոր մենք այդ վալյուտայով կառուցել ենք Մադնիտոտորոյը, Դնեպրոտորոյը, Կոզնեցկիտորոյը, Ստալինգրադի ու Պարկովի տրակտորային գործարանները, Գորկու ու Մոսկովայի ավտոմոբիլային գործարանները, հարյուր հազարավոր կոլտնտեսություններ ու հազարավոր խորհատնտեսություններ: Չե՞ն կար-

ծաւմ արդյոք այդ պարոնները, վոր այս բոլոր ձեռնարկութեան-
ները դարձանից ու կալից են կառուցված և վոչ թե վորոշ ար-
ժեք ունեցող իսկական շինանյութերից: Ինչո՞ւ և ապահովվում
խորհրդային վալյուտայի կայունութունը, յեթե, իհարկե, նկա-
տի ունենանք յերկրի ապրանքապտույտի մեջ վճողական նշանա-
կութուն ունեցող կազմակերպված շուկան և վոչ թե անկազմա-
կերպ շուկան, վորը լիկ ստորադաս նշանակութուն ունի: Իհար-
կե, վոչ միայն վոսկու պաշարով: Խորհրդային վալյուտայի կա-
յունութունն ապահովվում և ամենից առաջ՝ պետութեան ձեռ-
քում գտնվող ապրանքային մասսաների ահալին քանակու-
թյամբ, վորոնք ապրանքապտույտի մեջ են դրվում կայուն դնե-
րով: Տնտեսագետներից ո՞ւր կարող և թխտել, վոր միմիայն
ԽՍՀՄ-ում դոյութուն ունեցող աշխարհի ապահովութունը վա-
լյուտայի կայունութեան ամենից առաջ ապահովութուն և, քան
վոսկու ինչպիսի պաշար ուղում և լինի: Յերբեիցե կհասկանա՞ն
արդյոք կապիտալիստական յերկիրների տնտեսագետները, վոր
նրանք վերջնականապես խճճվել են վոսկու պաշարի՝ վորպես
վալյուտայի կայունութեան միակ ապահովութեան՝ թեորիայի
մեջ:

Այդպես և խորհրդային առևտրի ծավալման հետ կապված
հարցերի բանը:

Ինչ ձեռք բերինք մեր հնգամյակի իրականացման հետեան-
քով խորհրդային առևտրի ծավալման բնագավառում:

Վորպես հնգամյակի հանրագումար մենք ունենք.

ա) ամենացում թեթև արդյունաբերութեան արտադրանքի,
վորը 1928 թվականի համեմատութեամբ հասել և 187%-ի:

բ) կոոպերատիվ-պետական մանրածախ ապրանքապտույտի
աճում, վորն այժմ 1932 թվականի դեկտրվ կազմում և 39,6 մի-
լիարդ ռուբլի, այսինքն՝ մանրածախ առևտրում, 1928 թվականի
համեմատութեամբ, ապրանքային մասսայի ամենացում մինչև
175%:

գ) պետական-կոոպերատիվ առևտրային ցանցի աճում 158
հազար կրպակով ու թանութով 1929 թվականի համեմատու-
թյամբ.

դ) կոլտնտեսային առևտրի և առանձին պետական ու կոոպե-
րատիվ կազմակերպութունների դոյուլտնտեսական մթերումնե-
րի հարաճուն ծավալում:

Մրանք են փաստերը:

Թխնդամայն այլ պատկեր և ներկայացնում ապրանքա-

ապրտույտի դրութիւնը կապիտալիստական յերկիրներէ ներսում,
վերտեղ ճգնաժամը հասցրեց առևտրի կառաստրոֆիկ կրճատ-
ման, ձեռնարկութիւնների մասսայական վաւկման և մօնր ու
միջակ առևտրականներէ քայքայման, խոչոր առևտրական ֆիր-
մաների սնանկացման և առևտրական ձեռնարկութիւններում
ապրանքներէ կուտակման, յերբ շարունակում և ընկնել աշխա-
տավոր մասսաների դնողունակութիւնը:

Սրանք են չորս տարում կատարված հնգամյակի հանրազու-
մաբներն ապրանքապտույտի դարգացման բնագավառում:

ԶՈՐՍ ՏԱՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՀԱՆՐԱ- ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԹՇՆԱՄԻ ԴԱՍԱԿԱՐԳԵՐԻ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԻ ԴԵՄ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Արդյունաբերության, դյուղատնտեսության ու առևտրի ընա-
դարառում հնգամյակին իրականացնելու հետևանքով՝ մենք ժողո-
վրդական տնտեսության բոլոր մոլորտներում հաստատեցինք
սոցիալիզմի սկզբունքը, դուրս քշելով այնտեղից կապիտալիս-
տական տարրերին:

Ինչի՞ պետք է հասցնել այդ բանը կապիտալիստական տար-
րերի վերաբերմամբ և ինչի՞ հասցրեց այն իրականում:

Դա հասցրեց այն բանին, մոր հունից դուրս գցվեցին մեռնող
դասակարգերի վերջին մնացորդները—արդյունաբերողներն ու նը-
բանց սպասավորները, առևտրականներն ու նրանց արբանյակնե-
րը, նախկին ազնվականներն ու տերտերները, կուլակներն ու յեն-
թակուլակները, նախկին սպիտակ սպաներն ու ուրյադնիկները,
նախկին մոստիկաններն ու ժանդարմները, չովինիստական յե-
րանգի ամեն տեսակ բուրժուական ինտելիգենտներն ու մյուս
բոլոր հակախորհրդային տարրերը:

Այդ նախկին մարդիկ, դուրս գցված լինելով հունից և
ցրվելով ամբողջ ԽՍՀՄ-ով մեկ, սողոսկեցին մեր գործարաններն
ու ֆաբրիկաները, մեր հիմնարկներն ու առևտրական կազմակեր-
պությունները, յերկաթուղային ու ջրային տրանսպորտի ձեռնար-
կությունները և ղլխավորապես՝ կոլտնտեսություններն ու խորհ-
տնտեսությունները: Նրանք սողոսկեցին ու թաղնվեցին այնտեղ,

հազնեկով «բանվորների» ու «գյուղացիների» դիմակ, ըստվորում նրանցից վոժանք խցկվեցին նույնիսկ կուսակցութեան մեջ:

Ի՞նչ բերին նրանք այնտեղ: Իհարկե, ատելութեան գդացմունք դեպի խորհրդային իշխանութիւնը, մոլեգին թշնամութեան գդացմունք դեպի տնտեսութեան, կենցաղի, կուլտուրայի նոր ձևերը:

Այդ պարտններն այլևս անդոր են ուղղակի գրոհի դիմեկու խորհրդային իշխանութեան դեմ: Նրանք և նրանց դասակարգերն արդեն միքանի անգամ այդպիսի գրոհ արեւ են, բայց ջախջախվել ու ցանուցրիվ են արվել: Այդ պատճառով միակ բանը, վոր մնում է նրանց անել, դա բանվորներին, կոլտնտեսականներին, խորհրդային իշխանութեանը, կուսակցութեանը վատութիւն անելն ու վնասելն է: Յեւ նրանք վնասում են, ինչպես վոր կարող են միայն, դործելով դանդաղ դադարողի: Հրկիզում են սահնակները և կորում են մեքենաները: Կադմակերպում են սարքոտաժ: Վնասարարութիւն են կադմակերպում կոլտնտեսութիւններում, խորհտնտեսութիւններում, ըստվորում նրանցից վոժանք, վորոնց թվում կան նաև ինչ-վոր պրոֆեսորներ, իրենց վնասարարական յեռանդով այնտեղ են հասնում, վոր կոլտնտեսութիւններում ու խորհտնտեսութիւններում անասուններին ժանտախտ, սիբիրախտ են պատվաստում, նպաստում են մեկն-դիտի տարածմանը ձիերի մեջ և այլն:

Բայց գլխավորն այդ չէ: Այդ նախկին մարդկանց «գործունեյութեան» մեջ գլխավորն այն է, վոր նրանք կադմակերպում են պետական գույքի, կոոպերատիվ գույքի, կոլտնտեսային սեփականութեան մասսայական գողութիւն ու հափշտակում: Գողութիւն ու հափշտակում՝ ֆաբրիկաներում ու գործարաններում, գողութիւն ու հափշտակում՝ յերկաթուղային բեռների, գողութիւն ու հափշտակում՝ պահեստներում ու ատկարաւիշն ձեռնարկութիւններում, — առանձնապես գողութիւն ու հափշտակում՝ խորհտնտեսութիւններում ու կոլտնտեսութիւններում, — այս է այդ նախկին մարդկանց «գործունեյութեան» հիմնական ձևը: Նրանք կարծես դասակարգային բնադդով գղում են, վոր խորհրդային տնտեսութեան հիմքը հանրային սեփականութիւնն է, վոր պետք է ցնցել հենց այդ հիմքը՝ խորհրդային իշխանութեանը վնաս տալու համար. և նրանք իսկապես աշխատում են ցնցել հանրային սեփականութիւնը՝ մասսայական գողութիւնն ու հափշտակում կադմակերպելու միջոցով:

Հափշտակութիւններ կադմակերպելու համար նրանք ոգտա-

գործում են կոլտնտեսականների, յերեկվա մենատնտեսների, իսկ այժմ կոլտնտեսութան անդամների մասնավոր—սեփականատիրական ընտելություններն ու մնացուկները: Դուք, վորպես մարդ-սխտներ, պետք է դիտենաք, վոր մարդկանց դիտակցությունն իր զարգացումով հետ է մնում նրանց փաստական դրությունից: Վոլտնտեսականներն իրենց դրությամբ այլևս մենատնտեսներ չեն, այլ կոլեկտիվիստներ են, բայց նրանց դիտակցությունն առայժմ գեռ. հինն է, մասնավոր—սեփականատիրականը: Յեվ ահա շահագործող դասակարգերի շարքերից դուրս յեկած նախկին մարդիկ ուղտադործում են կոլտնտեսականների մասնավոր—սեփականատիրական սովորությունները, վորպեսզի հանրային դուլքի համըշտակում կազմակերպեն և դրանով խախտեն խորհրդային կարգերի հիմքը—հանրային սեփականությունը:

Մեր ընկերներից շատերը բարենոյի հայացքով են նայում նման յերեույթին, չհասկանալով մասսայական գաղության ու համըշտակության փաստերի իմաստն ու նշանակությունը: Նրանք կույրի նման անցնում են աղ փաստերի կողքով, կարծելով, թե «այդտեղ առանձնապես վոչինչ չկա»: Բայց նրանք, այդ ընկերները, խորապես սխալվում են: Մեր հասարակակարգի հիմքը կազմում է հանրային սեփականությունը ճիշտ այնպես, ինչպես կապիտալիզմի հիմքը կազմում է մասնավոր սեփականությունը: Յեթե կապիտալիստները մասնավոր սեփականությունը հռչակեցին սրբազան ու անձեռնմխելի՝ ձեռք բերելով իր ժամանակին կապիտալիստական հասարակակարգի ամբապնդումը, ապա մենք, կոմունիստներս, առավել ևս սրբազան ու անձեռնմխելի պետք է հռչակենք հանրային սեփականությունը, վորպեսզի դրանով իսկ ամբապնդենք տնտեսության նոր սոցիալիստական ձևերն արտագրության ու ատեարի բոլոր բնագավառներում: Թույլ տալ հանրային սեփականության գողացումն ու համըշտակումն,—միևնույն է՝ բանը վերաբերում է արդյոք պետական սեփականությանը, թե կոոպերատիվ ու կոլտնտեսային սեփականությանը,—անցնել նման հակահեղափոխական աշխնդակությունների կողքով,—նշանակում է՝ նպաստել խաբխելու խորհրդային կարգերը, վորոնք հենվում են հանրային սեփականության վրա, վորպես իրենց բաղադրի վրա: Դրանից եր յերևում մեր խորհրդային կառավարությունը, յերբ նա վերջերս որևէ հրատարակեց հանրային սեփականության պահպանման մասին: Այդ որևէք ներկա մոմենտում հեղափոխական որինականության հիմքն է: Իսկ նրա ամենախիստ կենսագործման պարտավորությունն ամեն մի կոմու-

նիստի, ամեն մի բանվորի ու կոլտնտեսականի ամենաառաջին պարտականութիւնն է:

Ասում են, թե մեր ժամանակվա հեղափոխական որինականութիւնը վոլնչով չի տարբերվում նեպի առաջին շրջանի հեղափոխական որինականութիւնից, թե մեր ժամանակվա հեղափոխական որինականութիւնը մի վերադարձ է դեպի նեպի առաջին շրջանի հեղափոխական որինականութիւնը: Այդ միանշամայն սխալ է: Նեպի առաջին շրջանի հեղափոխական որինականութիւնը նրն իր սուր ծայրով ուղղված էր դիտաւորապէս ռազմական կոմունիզմի ծայրահեղութիւնների դեմ, «սպորինի» բռնադրամիւսներին ու հարկերի դեմ: Նա ապահովում էր մասնավոր անտեսաւորութիւնը, մենատնտեսին, կապիտալիստին՝ նրանց դուքի պահպանումն այն պայմանով, վոր նրանք ամենախիստ կերպով պահեն խորհրդային որենքները: Բոլորովին այլ կերպ է հեղափոխական որինականութեան բանը մեր որերում: Մեր ժամանակվա հեղափոխական որինականութիւնն իր սուր ծայրով ուղղված է վոլչ թե ռազմական կոմունիզմի ծայրահեղութիւնների դեմ, վորոնք վաղուց է՝ այլեւս գոյութիւն չունեն ընդհանրական մեջ, այլ գողերի ու միասարարների դեմ հանրային անտեսութեան, մեջ, խուլիգանների ու հանրային սեփականութիւնը հաւիչտակողների դեմ: Հետեւաբար, մեր ժամանակներում հեղափոխական որինականութեան հիմնական հոգսը հանրային սեփականութիւնը պահպանելն է, և վոչ թե վորեւէ այլ բան:

Ահա թե ինչու հանրային սեփականութեան պահպանման համար պայքարելը, խորհրդային իշխանութեան որենքներով մեզ արամադրվող բոլոր միջոցներով ու բոլոր յեղանակներով պայքարելը—կուսակցութեան հիմնական խնդիրներից մեկն է:

Պրոլետարիատի ուժեղ ու հզոր դիկտատուրա, — ահա թե ինչ է պետք մեզ այժմ, վորպեսզի մենք բոլորովին հողմացրիւ աւեննք մեռնող դասակարգերի վերջին մնացորդները և ջախջախենք նրանց գողային մեքենայութիւնները:

Միջանի ընկերներ դասակարգերի վոլնչացման, անդասակարգ հասարակութեան կառուցման և պետութեան մահացման թեզիսը հասկացել են վորպէս ծուլութեան ու բարեհոգութեան արդարացում, վորպէս դասակարգային կռիւի մարելու և պետական իշխանութեան թուլանալու հակահեղափոխական թեորիայի արդարացում: Այլեւորդ և նույնիսկ ասել, վոր այդպիսի մարդիկ վոչ մի ընդհանուր բան չեն կարող ունենալ մեր կուսակցութեան հետ: Նրանք կա՛մ վերասերվածներ են, կա՛մ յերկերեսուններ,

վորոնց պետք է դուրս վոնդել կուսակցությունից: Դասակարգերի վոչնչացումը գլուխ է բերում վոչ թե դասակարգային կռիւ մարման միջոցով, այլ նրա ուժեղացման միջոցով: Պետութեան մահացումը կգա վո՛չ թե պետական իշխանութեան թուլացման, այլ նրա առաւելագույն ուժեղացման միջոցով, վոր անհրաժեշտ է՝ մեռնող դասակարգերի մնացորդներին վերջնականապես ջախջախելու և կապիտալիստական շրջապատման դեմ պաշտպանություն կազմակերպելու համար, մի շրջապատում, վոր դեռ հեռու չէ վոչնչացումիւ: Ինչեւեւ և դեռ չուտով չի վոչնչացվի:

Վորպես հնգամյակի իրականացման արդյունք՝ մենք հասանք այն բանին, վոր վերջնականապես դուրս գցեցինք թէնամի դասակարգերի վերջին մնացորդներին նրանց արտադրական դիրքերից, ջախջախեցինք կուակուլութունը և հող նախապատրաստեցինք նրան վոչնչացնելու համար: Այս է հնգամյակի հանրագումարը բուրժուազիայի վերջին ջոկատների դեմ մղվող պայքարի բնադաւադում: Բայց այդ քիչ է: Խնդիրն այն է, վոր դուրս չպրանք այդ նախկին մարդկանց մեր իսկ սեփական ձեռնարկություններից ու հիմնարկներից և վերջնականապես անվնաս դարձնենք նրանց:

Չի կարելի ասել, թե այդ նախկին մարդիկ իրենց վնասաբեր ու դողային մեքենայություններով կարող են մի բան փոխել իմ ձեռքի աշխատանքի դուրսը: Նրանք չափազանց թույլ ու անզոր են, վորպեսզի կարողանան դիմակայել խորհրդային իշխանութեան ձեռնարկումներին: Բայց յետո՛ւ մեր ընկերները չըզինվեն հեղափոխական զգաստութեամբ և դուրս չվոնդեն իրենց պրակտիկայից քաղքենիական-բարեհոգի վերաբերմունքը դեպի հանրային սեփականութեան դողութեան ու հալչտակման փառաբերը, ապա նախկին մարդիկ կարող են բավականաչափ չարիք պատճառել:

Պետք է նկատել ունենալ, վոր խորհրդային պետութեան դողութեան աճումն ուժեղացնելու յի մեռնող դասակարգերի վերջին մնացորդներին դիմադրությունը: Հենց այն պատճառով, վոր նրանք մեռնում են և իրենց վերջին որերն են ապրում, նրանք անցնելու յեն հարձակման մի ձևից հարձակման այլ, ավելի ռուր մորիլիզացիայի յենթարկելով խորհրդային իշխանութեան դեմ: Չկա այնպիսի ցածություն ու զրպարտություն, վոր այդ նախկին մարդիկ չբարդեյին խորհրդային իշխանութեան վրա և վորոնց շուրջը չփորձեյին մորիլիզացիայի յենթարկել հետամնաց տար-

ներքին: Այդ հոգի վրա կարող են վերակենդանանալ ու շարժվել հակահեղափոխական հին կուսակցությունների, ես-երների, մեն-շեխիների, կենտրոնի ու ծայրերիկերների թուրթուական նացիոնա-լիստների ջախջախված խմբերը, կարող են վերակենդանանալ ու շարժվել հակահեղափոխական ուղղիցիոն տարրերի բեկորները արոցկիստների և աջ ուղիւնիստների խմբից: Այդ, իհարկե, սար-սավիյի չէ: Բայց այդ ամենը պետք է նկատի ունենալ, յեթե մենք ուզում ենք արագությամբ ու առանց առանձին գոհերի վերջ տալ այդ տարրերին:

Ահա թե ինչու հեղափոխական դեաստությունը հենց այն հատկությունն է, վոր այժմ առանձնապես անհրաժեշտ է բոլ-շեխների համար:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սրանք են հնդամյա սլանի կենսադործման հիմնական հան-
րադրամարներն արդյունաբերության ու դյուղատնտեսության բնա-
դալառում, աշխատավորների կենցաղի բարելավման և ապրան-
քապրտույտի դարդացման բնադալառում, խորհրդային իշխանու-
թյան ամրացման և մահացող դասակարգերի մնացորդների ու
մնացուկների դեմ մղվող դասակարգային պայքարի ծավալման
բնադալառում:

Սրանք են խորհրդային իշխանության հաջողություններն ու
նվաճումները վերջին չորս տարում:

Սխալ կլիներ այդ հաջողությունների հիման վրա կարծել,
թե մեղանում ամեն ինչ բարեհաջող է: Իհարկե, մեղանում ամեն
ինչ ել դեռ բարեհաջող չէ: Մեր աշխատանքի մեջ բախկանաչափ-
թերություններ ու սխալներ կան: Դեռ մինչև այժմ ել մեր պրակ-
տիկայում տեղ ունի անտնտեսավարությունն ու խառնաչփութու-
թյունը: Դժբախտաբար յես չեմ կարող հիմա կանգ առնել թե-
րությունների ու սխալների վրա, վորովհետև ինձ հանձնարար-
ված հանրադրամարային ղեկուցման շրջանակները դրա համար
ինձ լայն տեղ չեն տալիս: Բայց բանը հիմա այդ չէ: Բանն այն
է, վոր, չնայած թերություններին ու սխալներին, վորոնց առ-
կայությունը մեղանից վոչ վոք չի ժխտում, մենք ձեռք բերինք
այնպիսի լուրջ հաջողություններ, վորոնք հիացմունք են առա-
ջացրում ամբողջ աշխարհի բանվոր դասակարգի մեջ, մենք ձեռք
բերինք այնպիսի հաղթություն, վորը ճշմարիտ վոր համաշխար-
հային պատմական նշանակություն ունի:

Ի՞նչը կարող եր խաղալ և ի՞նչն իրոք խաղաց գլխավոր դերն
այն բանում, վոր, չնայած սխալներին ու թերություններին, կու-

սակցությունն այնպէս մեծացան ի վնասակարան հաջողություններ ձեռք բերեց հնգամյակը չորս տարում իրականացնելու դործում։ Վճարող են այն հիմնական ուժերը, վորոնք, հակառակ ամեն բանի, ապահովեցին մեզ համար այդ պատմական հաղթությունը։

Այդ, նախ, բանվորներն ու կոլտնտեսականներն միլիոնավոր մասսաների ակտիվությունն ու անձնակրությունն էր, խանդավառությունն ու ձեռներեցությունը, մասսաներ, վորոնք ինժեներ-տեխնիկական ուժերի հետ միասին հսկայական եներգիւ զարգացրին սոցիալիստական մրցակցության ու հարվածայնության ծավալման նկատմամբ։ Տարակույս չի կարող լինել, վոր առանց այդ հանգամանքի մենք չէինք կարողանա նպատակի հասնել, չէինք կարողանա վոչ մի քայլ առաջ շարժվել։

Յերկրորդ, դա կուսակցության ու կառավարության հաստատուն դեկավարությունն էր, վորոնք կոչ էյին անում մասսաներին առաջ դնալու և վորոնք հաղթահարում էյին դեպի նպատակը տանող ճանապարհին ծառացած բոլոր ու ամեն տեսակ դժվարությունները։

Վերջապէս, դա տնտեսության խորհրդային սիստեմի հատուկ արժանիքներն ու առավելություններն էյին, մի սխառն, վորի մեջ թագնված են բոլոր ու ամեն տեսակ դժվարությունները հաղթահարելու համար անհրաժեշտ վիթխարի հնարավորություններ։

Սրանք են այն յերեք հիմնական ուժերը, վորոնք վորոշեցին ԽՍՀՄ-ի պատմական հաղթությունը։

Ընդհանուր յեզրակացություններ.

1. Հնգամյակի հանրագումարները տապալեցին բուրժուական ու սոցիալ-դեմոկրատական դործիչների այն պնդումը, թե հընդամյա պլանը մի Փանտաղիա յե, մի դառանցանք, անիրագործելի ցնորք։ Հնգամյակի հանրագումարները ցույց տվին, վոր հընդամյա պլանն արդեն իրականացված է։

2. Հնգամյակի հանրագումարները ջախջախեցին բուրժուական հայտնի այն «հավատո հանգանակը», թե բանվոր դասակարգն անընդունակ է նոր բան կառուցելու, թե նա ընդունակ է միայն հինը կործանելու։ Հնգամյակի հանրագումարները ցույց տվին, վոր բանվոր դասակարգն ընդունակ է նույնքան լավ կառուցելու նորը, վորքան և կործանելու հինը։

3. Հնգամյակի հանրագումարները ջախջախեցին սոցիալ-դեմոկրատների այն թեզիսը, թե մեկ, առանձին վերցրած յերկրում

անհնար եւ սոցիալիզմ կառուցել: Հնգամյակի հանրագումարները
ցույց տվին, վոր միանգամայն հնարավոր եւ սոցիալիստական հա-
սարակություն կառուցել մեկ յերկրում, վորովհետեւ աշխարհի
հասարակութեան տնտեսական հիմքն արդեն կառուցված եւ
ԽՍՀՄ-ում:

4. Հնգամյակի հանրագումարները տապալեցին բուրժուական
տնտեսագետներին այն պնդումը, թե տնտեսութեան կապիտալիս-
տական սիստեմը լաւագուցն սխտեմն եւ, թե տնտեսութեան ամեն
մի այլ սիստեմ՝ անկայուն եւ անընդունակ՝ քննություն բռնելու
տնտեսական զարգացման դժվարություններին հանդէպ: Հնգամյա-
կի հանրագումարները ցույց տվին, վոր տնտեսութեան կապիտա-
լիստական սիստեմը սնանկ եւ ու անկայուն, վոր նա արդեն անց
եւ կացնում իր դարը եւ իր տեղը պետք եւ դիլի տնտեսութեան մի
այլ, ավելի բարձր, խորհրդային, սոցիալիստական սիստեմի,
վոր տնտեսութեան միակ սխտեմը, վորը չի վախենում ճգնաժա-
մերից եւ ընդունակ եւ հաղթահարելու կապիտալիզմի համար ան-
լուծելի դժվարությունները, — դա տնտեսութեան խորհրդային
սիստեմն եւ:

5. Վերջապես, հնգամյակի հանրագումարները ցույց տվին,
վոր կուսակցությունն անպարտելի յե, յեքն նա գիտե, թե ուր
պետք եւ տանի գործը, եւ չի վախենում դժվարություններից:

(Փոքորկալից, յերկար չդադարող ծափահարություններ, վո-
րոնք ովացիայի յեմ վերածվում, դահլինը վստփի կանգնած վոդ-
շաւում եւ ընկ. Ստալինին):



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

I. Հնգամյակի միջազգային նշանակությունը . . .	5
II. Հնգամյա պլանի հիմնական խնդիրը և նրա կենսագործման ուղին	18
III. Չորս տարում կատարված հնգամյակի հանրագումարներն արդյունաբերության բնագավառում . . .	22
IV. Չորս տարում կատարված հնգամյակի հանրագումարները գյուղատնտեսության բնագավառում	32
V. Չորս տարում կատարված հնգամյակի հանրագումարները բանվորների ու գյուղացիների նյութական դրության բարելավման բնագավառում	40
VI. Չորս տարում կատարված հնգամյակի հանրագումարները ֆաղափի և գյուղի միջև տեղի ունեցող ապրանքապտույտի բնագավառում	46
VII. Չորս տարում կատարված հնգամյակի հանրագումարները քշնամի դասակարգի մնացորդների դեմ մղվող պայքարի բնագավառում	51
VIII. Ընդհանուր յեզրակացություններ	57

6026

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Եջ	Տող	Տպված է	Պետք է լինի
35	1 վ.	տապալման	«տապալման»
45	3 վ.	35 միլիոն	35 միլիարդ
53	19 վ.	սխալվում են	մոլորվում են

Թարգմ. Յերվ. Տ.-Մինասյան
Խմբագիր՝ Վ. Գուրգենյան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Պատ. սրբագրել է Արվյան

Գլավիտի լիազոր ի—9714, հրատ. № 496
Պատվեր № 169, տիրած 6000,
Հանձնված է արտադրության 16/VIII 1937 թ.
Ստորագրված է տպագրելու 3/IX 1937 թ.
Գինը 60 Կ.

Հայկոսհրատի տպարան, Յերևան, Ալավերդյան № 71

Прое. 1940г.

Прое. 1940г.

ԳԱՆ Հիմնարար գիտ. գրադ.



FL0021347

51

—ОБЩЕГО

9522 60-4.

ЦЕНА

A II
6818

И. С Т А Л И Н
ИТОГИ
ПЕРВОЙ
ПЯТИЛЕТКИ

Агитиздат, Ереван, 1937